ՀԱՅ-ՀԱՐԱՒՍԼԱՒԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ
(ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ 1930ԱԿԱՆՆԵՐ)

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Բալկանեան թերակղզու երկրներից (Բուլղարիա, Ռումինիա, նախկին Հարաւսլաւիայի երկրներ, Ալբանիա, Յունաստան) ամէնից քիչ հայկական ներկայութիւն ունեցել են հարաւսլաւական երկրները (աւելի պակաս չափով՝ Ալբանիան)։ Հարաւսլաւիա (արեւմտահայերէնում ընդունուած է նաեւ Եուգոսլաւիա/Եուկոսլաւիա ձեւը) ասելով նկատի ունենք նախկին Հարաւսլաւիայի Սոցիալիստական Հանրապետութիւնը կազմող երկրները՝ Սերբիա-Չեռնոգորիան (Մոնտէնեգրո[1]), Հրուաթիան, Բոսնիա-Հերցեգովինան, Սլովենիան եւ Մակեդոնիան։

Հակառակ իրենց սակաւաթիւ ներկայութեանը, միջնադարից սկսեալ հայերի ունեցած այլեւայլ շփումները ուրոյն հետաքրքրութիւն են ներկայացնում՝ որպէս հայ գաղթականութեան եւ Եւրոպայի այդ տարածաշրջանի ժողովուրդների հետ առնչութիւնների պատմութեան դրսեւորումներից մէկը։ Յատկապէս Սերբիայի պատմութեան հետ հայերի ճակատագրի նմանութիւնը առիթ է տուել երկու ժողովուրդների միջեւ զուգահեռների անցկացման[2]։ Հայ ժողովուրդը մշտապէս հետաքրքրուել է իր պէս օսմանեան լծի տակ գտնուող եւ ազատագրական պայքար մղող սերբ ժողովրդով[3]։

Հարաւսլաւիայի հայերի պատմութեամբ զբաղուել են հատուկենտ ուսումնասիրողներ, սակայն ցայժմ չկայ առկայ փաստերն արտացոլող մի համապարփակ ուսումնասիրութիւն։ Թեման յատկապէս հետաքրքրել է որոշ ժամանակ Սկոպիէում բնակուած բանաստեղծ Յակոբ-Գրիգորը (Ճրրճրրեան, 1905-1985), որ 1930ականների սփիւռքահայ մամուլում հանդէս է եկել Հարաւսլաւիայի հայութեան մասին յօդուածներով։ Դրանց մի մասը յետագայում ամփոփուել է Յակոբ-Գրիգորի յօդուածների ժողովածուի մէջ[4]։ Հայ-հարաւսլաւական կապերի պատմութեամբ զբաղուել են նաեւ բանաստեղծ Աշոտ Յովակիմեանը եւ գրող, թարգմանիչ, սերբագէտ, Հայաստանում Սերբիայի պատուաւոր հիւպատոս Բարկէն Սիմոնեանը[5], ինչպէս նաեւ սերբ հեղինակ Եովո Պայիչը, որի «Հայերը Սերբիայում» ուսումնասիրութիւնն ընդգրկուել է 2003ին

Բելգրադում լոյս տեսած Հայերը. Պատմութիւնը, Եղեռնը, Գաղթը գրքում[6]: Մի քանի պատմաբաններ հայ գաղթավայրերին նուիրուած ուսումնասիրութիւններում անդրադարձել են Սերբիայի հայ համայնքին[7]:

Սոյն ակնարկով ձգտել ենք համախմբել ինչպէս Հարաւսլաւիայի երկրներում հայերի ներկայութեան վերաբերեալ եղած պատմական իրողութիւնները, այնպէս էլ առանձին հայերի՝ Հարաւսլաւիայի երկրների եւ հարաւսլաւցի ժողովուրդների՝ հայ ժողովրդի հետ ունեցած առնչութիւններին վերաբերող փաստերը[8]:

ՇՓՈՒՄՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (Ժ.-ԺԸ.դդ.)

Ըստ Յակոբ-Գրիգորի՝ «Հայ եւ սերպ յարաբերութիւնները ոչ մէկ ատեն տեղի ունեցած են պատմութեան մէջ, եթէ չհաշուենք մէկ քանի հայերու գործունէութիւնը այս պետութեան մէջ: Կարելի է հետեւաբար առանց այլեւայլի ըսել, որ հայ տարրը Պալքանեան բոլոր պետութիւններու մէջ ամենէն քիչ ազդեցութիւնը Եուկոսլաւիոյ մէջ է որ ունի»[9]: Բելգրադի Համալսարանի պրոֆեսոր դոկտոր Տիխոմիր Ջորջեւիչը (Թխումիր Ճորճեւիչ, Tihomir Georgević) հայերի մասին ասել է. «Մենք որ բաւական հեռու ենք ապրել նրանցից, շատ բան ենք պարտք հայի քաղաքակրթիչ ոգուն: Մեր առաջին բժիշկը եւ նկարիչը հայեր են եղել, մեր առաջին գրքերը տպուել է մի հայի կողմից, մեր մէջ ճարտարարուեստը եւ վաճառականութիւնը մտցնողները հայեր են եղել»[10]: Սերբական աղբիւրների քննութեամբ հնարաւոր կը լինի պարզել, թէ որքա՞ն է ստոյգ այս տուեալը եւ թէ ովքե՞ր են եղել այդ բժիշկը, նկարիչը եւ տպագրիչը[11]:

Հայերի ներկայութիւնը Հարաւսլաւիայում սկսուել է Ժ. դարից, երբ երկրի տարածքում բիւզանդական կայսրերի կողմից վերաբնակեցուել են պաւղիկեան աղանդի հետեւորդ հայեր, ապա նաեւ՝ հայ առաքելականներ եւ քաղկեդոնականներ: Հայեր են բնակուել Բիտոլիէ եւ Օհրիդ քաղաքներում: Ճարտարապետութեան պատմաբան Յովհաննէս Խալփախչեանը եւ բիւզանդագէտ Հրաչ Բարթիկեանը անդրադարձել են Հարաւսլաւիայի տարածքում գտնուած հայերէն վիմագիր արձանագրութիւններին: Դրանցից մէկը յայտնաբերուել է 1948ին՝ Պետրովէց քաղաքից 10 կմ. արեւելք գտնուող Վիտովնիցի վանքի (Manastir Vitovnica) Սուրբ Յակոբ եկեղեցում: Այնտեղ գտնուած սերբերէն-հայերէն երկլեզու արձանագրութիւնը կատարուած է 1218ին: Երկրորդ արձանագրութիւնը, թուագրուած 1202, յայտնաբերուել է 1966ին, Մակեդոնիայի հարաւում, Պրիլեպի Վարոշ գիւղի Ս. Դիմիտրիոսի եկեղեցում[12]: «Այսպի-

սով XIII դարի հենց սկզբին գոյութիւն ունեցող Ս. Առաքելոց հայկական եկեղեցին վկայում է, որ Պրիլեպի շրջանում եղել է բազմամարդ հայկական համայնք»[13]։ Հայերի ներկայութեան վկայութիւնն է նաեւ Վրաշաչ քաղաքից 21 կմ. հիւսիս-արեւմուտք հեռաւորութեան վրայ գտնուող Երմենովցի գիւղը (այժմ Հարաւային Բանատի շրջանում, Վոյվոդինայի Ինքնավար Նահանգում)։ Երմենովցի սերբերէն նշանակում է «հայեր»։ բնակավայրը յայտնի է նաեւ գերմաներէն անուանումով Ürmenhausen եւ հունգարերէնով՝ Ürményháza, որ երկու լեզուներով էլ նշանակում է «հայերի տուն»[14]։

Աւելի ուշ շրջանի են վերաբերում Սերբիայի տարածքում հայկական վանքերի գոյութիւնը եւ հայ ճարտարապետութեան՝ սերբականի վրայ ունեցած հնարաւոր ազդեցութիւնը։ Ցայտնի է, որ հայազգի օսմանեան ճարտարապետ Միմար Սինանի նախագծով շէնքեր են կառուցուել Բիտոլիէում (Մակեդոնիա) եւ Սարաեւոյում։ Ճարտարապետութեան պատմաբան Օգիւստ Շուազիի կարծիքով՝ հայ միջնադարեան ճարտարապետութիւնը որոշակի ազդեցութիւն է թողել Հարաւսլաւիայի տարածքում գտնուող սերբական ճարտարապետութեան վրայ[15]։

Հորվաթիայի Ռագուզա կամ Դուբրովնիկ քաղաքի պաշտպան սուրբն է Սեբաստիայի քրիստոնեաների հովուապետ հայորդի Վլասիոսը կամ Վլասը (Գ.-Դ.դդ.), որ հորվաթներին յայտնի է Սվետի-Վլահօ, Վլահա, Վլահօ Բլազ կամ Սվետի Բլազ անուններով։ Այս հայ սրբի պաշտամունքն այնքան ուժեղ է եղել Հորվաթիայում, որ ժամանակին երկիրն անուանել են «Սուրբ Բլազի հանրապետութիւն», նրա պատկերը ԺԵ. դարում դրոշմուել է երկրի խորհրդանշանի վրայ, ԺԶ. դարում՝ ծովային դրօշին, ԺԸ. դարում՝ մետաղադրամների վրայ։ Նրա պատկերով ստեղծուել են բազմաթիւ քանդակներ եւ փորագրանկարներ, իսկ Դուբրովնիկի Դոմինիկեան եկեղեցում գտնւում է իտալացի մեծանուն նկարիչ Տիցիանի (1476-1576)՝ սուրբ Վլասին պատկերող գեղանկարը։ Սուրբ Վլասի անունով եկեղեցիներ կան ոչ միայն Դուբրովնիկում, այլեւ Հորվաթիայի տասնեակ բնակավայրերում եւ կղզիներում (Զագրէբ, Կոմիցա, Ստոն)[16]։ ԺԳ. դարում Մոնտէնեգրոյի թագուհի, ծագումով Ֆրանսուհի Հելէն դ'Անժուն Ուլկինի (Ուլչինյ) բնակավայրում կառուցել է Սուրբ Վլահոյի անուամբ եկեղեցի, իսկ Սկոպիէի ԺԴ. դարի սուրբ Մարկոյի եկեղեցու որմնանկարներից մէկում առկայ է Վլասի կերպարը[17]։

Դուբրովնիկի մասին խօսելիս յիշենք նաեւ, որ ԺԲ.-ԺԳ. դարերի հայազգի հերոս Հանտոնացի Բէովէի մասին ասպետական վէպն ունեցել է տարբերակներ եւրոպական մի քանի երկրներում, նաեւ՝ Դուբրովնի-

կում[18]։ Ի դէպ, Հորվաթիային պատկանող կղզիներից մէկը կոչւում է Sipan, սակայն թերեւս այս նմանութիւնը Հայաստանի Սիփան լեռան հետ զուտ պատահականութիւն լինի։

Սերը ժողովուրդը յիշւում է արդէն ԺԲ. դարի հայ բանաստեղծ Գրիգոր Տղայի (1133-1194) «Ահա ձայնեմ ձայն ողբագին» սկսուածքով վիպերգում (յայտնի որպես «Ողբ Երուսաղէմի»)։ Այնտեղ յիշատակուած են եւրոպական մի շարք երկրներ եւ ժողովուրդներ, որոնց անունները թուարկում է մահմեդականներից գրաւուած անձնաւորուած Երուսաղէմը։ Նա ողբում է, որ Եւրոպայից շատերը կարող էին օգնութեան հասնել, սակայն այդպէս էլ ոչ ոք չի սատարել իրեն («Եւ ոչ ոք չհասաւ ինձ ի թիկին»), եւ անունների երկար շարքում յիշում է նաեւ «Ոչ թագաւոր Սերպաց ազգին»[19]։

Ըստ Միլոշ Ցրեանսկու գրառած աւանդութեան՝ սերը առաջին արքեպիսկոպոս սուրբ Սաւան եղել է Հայաստանում եւ շինարար վարպետներ է հրաւիրել սերբական եկեղեցիների կառուցման համար[20]։ Մէկ այլ աւանդութեան համաձայն՝ այն հայերը, որոնք օսմանեան զօրքի կազմում մասնակցել են 1389ի Կոսովոյի ճակատամարտին, չկամենալով կռուել քրիստոնեաների դէմ, թաքնուել են Սոկորանիա քաղաքին մերձ Օգրէն լերան վրայ։ Այստեղ էլ, 1392ին, ի նշան սերբերի հետ համերաշխութեան, կառուցել են Երմենչիչ վանքը, յայտնի որպէս Հայկական վանք։ Այն թէեւ պատմութեան ընթացքում մի քանի անգամ աւերել եւ հրկիզել են թուրքերը, սակայն եկեղեցին կանգուն է ցայժմ[21]։

ԺԳ.-ԺԴ. դարերում Դուբրովնիկում եղել է կիլիկեցի հայ վաճառականների փոքրաթիւ համայնք։ 1430ին Դուբրովնիկ է ժամանել Հռոմ ուղեւորուող մի հայագգի եպիսկոպոս։ Այս քաղաքում հայեր բնակուել են նաեւ ԺԷ. դարում. դրա ապացոյցն է այն, որ հայագգի իտալացի բժիշկ, ծնունդով նորջուղայեցի Ջորջո Բայլիւին (Baglivi, 1668-1707) ծնուել է Դուբրովնիկում։

Հայ-հարաւսլաւական կապերը նոր փուլ են մտել, երբ 1459ին Օսմանեան կայսրութիւնը վերջնականապէս գրաւել է Սերբիան։ 1521 Օգոստոսի 28ին սուլթան Սիւլէյման Կանունիի (եւրոպական գրականութեան մէջ՝ Սիւլէյման Հրաշալի, թագաւորել է 1520-1566) ղեկավարութեամբ օսմանեան զօրքերը գրաւել են Բելգրադի միջնաբերդը։ Քաղաքը մեծ մասամբ հողին է հաւասարուել։ Սակայն յաջորդ 150 տարիներին Բելգրադը եղել է խաղաղ բնակավայր, աւելի արեւելեան մի քաղաք՝ օսմանեան ճարտարապետութեամբ եւ նորակառոյց մզկիթներով, որ համարուել է Արեւելքի եւ Արեւմուտքի դարպասը։ Օսմանեան Սերբիան

ԺԵ.-ԺԶ. դարերում ունեցել է 100 հազարից աւելի բնակչութիւն, իսկ նրա մայրաքաղաքը դէպի իրեն է ձգել առեւտրականների եւ այնտեղ բնակուել փափագողների՝ հայերի, յոյների, թուրքերի, իտալացիների եւ այլոց մեծաթիւ խմբերի: Բելգրադում հաստատուած հայերի թիւը յատկապէս մեծ է եղել Կրալիա Պետրա կամ Դուբրովնիկի փողոցում, որը եղել է քաղաքի առեւտրի կենտրոններից: Մինչեւ 1920-30ականները՝ այդ փողոցի շինութիւնները վերականգնելիս պատերին յայտնաբերուել են հայերէն մակագրութիւններ[22]: Հայերը Բելգրադում առաջին անգամ յիշատակուել են 1573ին: Մատենագիր Գրիգոր Դարանաղցու (1576-1643) վկայութեամբ՝ 1604-1605 թթ. Ջալալիների վայրագութիւնների եւ թուրք-իրանական պատերազմների տարիներին Հայաստանի արեւելեան սահմաններից եւ Ղրիմից հայեր են հաստատուել Սերբիայում: Խօսելով Սուլթան Ահմէդի (1603-1617) իշխանութեան մասին, նա մասնաւորապէս նշել է, որ նրա ժամանակ «հայք եւ տաճիկք աստ հաւաքեալ եւ ցրուեալ մինչեւ զԲելըրդատն մինչեւ ցաշխարհն Պուղտանաց եւ Գոթացոց եւ ամենայն Իւսկութացոց»[23]: Բելգրադի անուանումը մէկ այլ ձեւով է նա յիշատակել նոյն ժամանակագրութիւնի մէջ. «յորժամ... յԸստամբոլ եկաք, եւ յամենայն հայոց աշխարհին ի Թէոդուպոլսէն ի վայր, ոմանք երկու ամաւ յառաջ եկեալ էին եւ ոմանք բազումք ընդ մեզ եկին, որ էր թվ. ՌԾԴ (1605), եւ շատք այլ յետոյ եկին եւ ցրուեցան յԱնատոլ եւ յՈւռումելս յամենայն քաղաքս, մինչ ի Պէլըրդատ, մինչ Պուղտանաց աշխարհն եւ ի Լեհաց»[24]: Բելգրադի հայերին յիշել է նաեւ 1669ին Հարաւսլաւիայում ճանապարհորդած անգլիացի ճանապարհորդ-բժիշկ Էդուարդ Բրաունը, որը Բելգրադում իջեւանել է մի հարուստ հայ առեւտրականի տանը[25]:

Հայերի թիւն աճել է նաեւ առեւտրական ճանապարհների վրայ գտնուող Նիշ եւ Պիրոտ քաղաքներում: Ճանապարհորդ-մատենագիր Սիմէոն Լեհացին (1584-1637), 1611-1613 ժամանակահատուածում ճամփորդելով Կ.Պոլսից Վենետիկ, անցել է Հարաւսլաւիայի տարածքով եւ իր Ուղեգրութիւնի մէջ յիշել տեղացի հայերին: Նա 12 օր մնացել է Սկուբ (Սկոպիէ) քաղաքում: «Եւ այնտեղ երեք տուն հայ կար, այգեպաններ՝ խիստ հիւրասէր եւ Աստծու երկիւղած, որ մեզ ընդունեցին իրենց մօտ, այգում, եւ մխիթարեցին մեզ կերակրով եւ անուշ խօսքերով...»[26]: Այնուհետեւ Լեհացին եղել է Պոսնա-սարայում (այժմեան Սարաեւօն), «որ մեծ քաղաք էր՝ շինուած բարձր լեռան վրայ: ...Չորս հայ վաճառական գտանք այնտեղ, որոնք մեզ սիրով ընդունեցին եւ մեծարեցին իջեւանատանը՝ մխիթարելով մեզ... Երկու օր մնացինք այնտեղ:

Եւ երկրի մարդիկ մեծ ու բարձրահասակ հսկաներ էին, ուժեղ ու զօրաւոր, երկայն ու յաղթանդամ: Բնաւ չգիտեն տաճկի լեզուն, այլ միայն պուլղարի»[27]: *Այստեղ Լեհացին սերբահորվաթերէնը չփոթել է բուլղարերէնի հետ:*

1634ին Եւրոպա կատարած ճանապարհորդութեան ժամանակ Բելգրադ է այցելել Մինաս Գրիչը, որը գրել է «Մի ի թուոցն հազարին» տողով սկսուող մի չափածոյ ուղեգրութիւն: Բելգրադ քաղաքի մասին նա գրել է հետեւեալը.

Ողորմութեամբ աստուածային,
Հասաք աւան Դանոբ գետին,
Որ էր քաղաք դղեակ նմին,
Զոր Պէլկրատ վերածայնին:

Սա է անուամբ Թրակիայ,
Որ եւ կոչի Եւրոպիայ
Մտաք դղեակ գիւղ աւանի,
Զոր Պէլկրատ նա որ ասի:

Խիստ մխիթար տեսաք զսա,
Որ մոռացուց վիշտս մեր սա,
Յամէն բարեաց լցեալ էր սա,
Առատութեամբ ձուկն, որ ի սմա:

Ամէն դիհաց գովեալ էր սա,
Առատութեամբ բարիքն ի սմա,
Խիստ աղքատաց տեղիք էր սա,
Զոր եւ տեսաք աչօք մեք սա:

Այլ յիսնակաց տեղիք էր սա,
Յառատութեամբ բարիքն ի սմա,
Դանոբ գետովն լցեալ էր սա,
Եւս առաւել ձուկն, որ ի սմա[28]:

Այս հարիւրամեակում Բելգրադը յիշատակուել է հայ մատենագրութեան այլ նմուշներում եւս, յատկապէս՝ ձեռագրերի յիշատակարաններում: Նիւրնբերգի քաղաքային գրադարանում պահուող հայերէն մի Տաղարան գրուել է Բելգրադում: Եւդոկիայում 1631ին գրուած մի

հայերէն ձեռագրում յիշւում է Բելգրադի գրաւումը թուրքերի կողմից[29]: *1684ին ընդօրինակուած մի Ցաւամաւուրքում կայ մի ժամանակագրութիւն, որտեղ, ի թիւս ժամանակի կարեւոր իրադարձութիւնների, յիշուած է առասպելանման մի դէպք, թէ ինչպէս* «Եւ դարձեալ ի ՌՁԲ (1633) թուին ի Բէլըրդաք տաճիկ մի խոզ դարձաւ»[30]:

1685ին Բելգրադում է եղել գրող եւ ազգային գործիչ Գաբրիէլ Թոխաթեցին, որն այդ մասին նշել է իր 1688 թուակիր պատկերազարդ յիշատակարանում (պահւում է Վիեննայի Կայսերական Մատենադարանում) «Թվոյն Հայոց ՌԵԼԴ, Լաթենացոց 1685, ես եկի Սեպտեմբերի 20 Թուրքաց երկրէն՝ Պ(է)լըրդատու, ի Պուտիմ»[31]: *Շարունակութեան մէջ Թոխաթեցին եւս մէկ անգամ յիշել է Բելգրադը.* «Թվոյն 1688 եւ ի Հայոց ՌԵԼԷ յունիսի ամսոյ 5 Նէմցան առաւ Ըստօնի Պէլըրդատ վէրայով. եւ էր միջի փաշան տէրէիտէցի շէյխ օղլի Ահմէտ փաշան երեսն զբերքն եւ ինքն ու միջի լինող Թուրքն ելան գնացին դէպի Թունայու Պէլըրդատ: Թվոյն 1688 քուրվիրշտն, որ է տուքայ տու Պավէրան, սա էառ Մեծ Պէլըրդատն ի Թուրքէն յեւիրուշով սեպտեմբերի ամսոյ 15»[32]: *Նոյն գրութեան մէջ յիշել է, որ 1682ի Յունիսի 28ին ինքը* «եկի Պէլըրդատ, ետոյ Պուտիմ»[33]:

1691ին գրուած մի Աւետարանի յիշատակարանում եւս յիշուած է նոյն թուականին Բելգրադի գրաւումը թուրքերի կողմից. «Տաճկունք... եկին առին զՊուտիմ եւ զՊէլիկրատ եւ զՆիշ մինչեւ ի Սոֆիա, զոր հերուն ամի կրկին գնացին Տաճկունք եւ առին զՆիշ եւ զՊէլիկրատ»[34]: *Մխիթարեան հայր Եղիա վարդապետ Կ.Պոլսեցին Բելգրադից 1735ի Յուլիսի 3ին նամակ է յղել Մխիթար Սեբաստացուն, տեղեկացնելով, որ Եւդոկիայից նամակ է եկել Բելգրադ, որտեղ նկարագրուած են Թոքաթ տանող ճանապարհները*[35]:

Հայ-սերբական կապերի վաղ օրինակներից է ԺԷ. դարի վերջին պոլսահայ միջավայրում աշխատած Յակոբ երէցը, ծնունդով Բելգրադից. Բալթիմորի Ուոլթըրզ պատկերասրահում պահւում է նրա ընդօրինակած եւ պատկերազարդած մի Շարակնոց (Ms W. 547), *որի յիշատակարանում նշուած է.* «Աստուածաւանդ սուրբ շարակնոցս գրեցաւ ի խնդրոյ աստուածապաշտ Նուասարդի որդի Ճլավս, ի վայելումն որդոցն, եւ ետ երկոցունց յիշատակ Աստուածատուրին, եւ միւս որդոյն (Ս)ահակին, եւ սա գրեցաւ ձեռամբ Պելիգրատցի Յակոբ երէցվէ ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլի, ի թուականիս հայոց ռճիէ (=1678) օգոստոս ամսոյ ԺԵ (15)»[36]: *Այս շրջանում Կ.Պոլսում ընդօրինակուած մի շարք մատեանների մանրանկարներում նկատելի է նրա ինքնատիպ*

ձեռագիրը, որ կրում է հայկական եւ օսմանեան մանրանկարչութեան կնիքը, ինչպէս նաեւ եւրոպական դպրոցի որոշակի ազդեցութիւնը։ Լեհ արուեստաբան Էւա Բալիցկա-Վիտակովսկան ենթադրել է, որ այս նոյն նկարչին են պատկանում Ուփսալայի (Շուեդիա) Համալսարանի գրադարանում պահուող 1681ին գրուած մի հայերէն հմայիլի պատկերազարդումները[37]։

Բելգրադում աւստրիական գրաւման ժամանակ հայերը որոշ արտօնութիւններ են ստացել, այդ թւում՝ եկեղեցի ունենալու։ Լէոպոլդ կայսեր թոյլտուութեամբ 1690ին Մովսէս վարդապետ Երեւանցին սկսել է Բելգրադի հայկական եկեղեցու շինարարութիւնը։ ԺԸ. դարի սկզբին եկեղեցու քահանան է եղել Տէր Պօղոսը։ Այս եկեղեցին յիշել են իրենց ճանապարհորդական նոթերում Ֆրանսիացի Կիկլէն (1658), գերմանացի Աուէրը (1664) եւ վերոյիշեալ անգլիացի Բրաուները (1669)[38]։ Եկեղեցուն կից եղել է գերեզմանատուն, որը յիշատակել է գերմանացի ճանապարհորդ Բրանդշտետնէրը[39]։ 1717ին աւստրիացիները Բելգրադի հայերին են ցանկացել տրամադրել քաղաքի Զէյնադին աղայի մզկիթը՝ եկեղեցի դարձնելու համար։ Այսօր Բելգրադի Կալեմեգդան գրօսայգում գտնուում է հայկական արձանագրութեամբ երեք տապանաքար, որոնք մնացել են այդ եկեղեցուց։ Դրանք պատկանել են 1685ին Բելգրադում մահացած վանեցի Ցունանին (Ցովնան), 1714ին մահացած շոռոթցի Մուրատին եւ մահտեսի Մուսէսին։ Երկրորդ տապանաքարի կողքին պահպանուել է նաեւ մի խաչքար[40]։

1722ին Բելգրադն արդէն ունեցել է 80 հայ բնակիչ։ 1728ին՝ Սերբիայում ապրել է շուրջ 200 հայ, մեծ մասը՝ Բելգրադում, որտեղ եղել է հայկական թաղամաս[41]։ 1777ի տուեալով Բելգրադի Զեմուն արուարձանում եղել է 1130 տուն 6800 բնակիչներով, որոնց կէսը եղել են սերբեր, մնացածը՝ կաթոլիկներ (յատկապէս գերմանացիներ), հրեաներ, հայեր եւ մահմեդականներ։ Բելգրադի հայութեան հոգեւոր հովուութիւնը ստանձնել է Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը։ Սակայն երբ 1739ին թուրքերը գրաւել են Բելգրադը եւ աւերել եկեղեցին՝ հայերը գաղթել են Աւստրիայի կազմի մէջ մտնող Նովի Սադ (Նասեաց) եւ Պետրովարադին քաղաքները, որոնցից առաջինում արդէն եղել է փոքրաթիւ հայ կաթողիկէ համայնք։ Շուտով Նովի Սադը դարձել է սերբերի մշակութային եւ քաղաքական կենտրոնը եւ կոչուել «սերբական Աթէնք» (Srpska Atina)։ 1746ին հիմնուել են Նովի Սադի հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ հայկական դպրոցը։ Փողոցը, որտեղ գտնուել է եկեղեցին, անուանուել է Հայկական, իսկ եկեղեցուց մինչեւ

Դանուբի ափը կառուցուած հողապատնէշը՝ Հայկական թումբ։ Բացումից մի քանի տարի անց Դանուբը յորդելով՝ մեծ վնաս է պատճառել Նովի Սադին ու նաեւ հայկական եկեղեցուն[42]։ Վիեննաբնակ նուիրակի միջոցով տեղի հայերը դիմել են Հռոմին, եւ այդպիսով ձեռք բերած 7756 ֆիորինգ գումարով հնարաւոր է եղել վերականգնել եկեղեցին։ Սակայն դրանով չեն վերջացել եկեղեցուն հասած փորձանքները։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին հրդեհուել է 1848ին եւ վերականգնուել 1874ին, երբ Մարիա Թրիանտաֆիլ անունով մի ուղղափառ կին սեփական միջոցներով վերանորոգել է եկեղեցին՝ ճարտարապետ Գէորգ Մոլնարի նախագծով եւ առեւտրական Յովհաննէս Ճանազիգեանի մեկենասութեամբ։ Այս եկեղեցին քանդուել է համայնավարական վարչակարգի օրօք՝ 1964ին[43]։ Այժմ այդ եկեղեցու հայատառ արձանագրութիւն կրող մի սալիկը պահւում է Պետրովարադինեան ամրոցի թանգարանում, իսկ եկեղեցու տեղում գետեղուած է խաչքար։ Պահպանուել է նաեւ Սիմէոն Մելիք Ճանազիգեանի գերդաստանի մահարձանը։ 1717-1913 Նովի Սադի հայ համայնքն ունեցել է 20 հովուապետ (17ը Վենետիկից, 3ը Վիեննայից, իսկ ընիկ նովիսադցի Սիմէոն Բարամենցը աւելի քան 30 տարի եղել է եկեղեցու աւագերէց)[44]։ 1845ի մի վիճակագրութեան համաձայն Նովի Սադն ունեցել է 17332 բնակիչ, որոնց մէջ 9675 ուղղափառ քրիստոնեաներ, 5724 կաթոլիկներ, 1032 բողոքականներ, 727 հրեաներ եւ հայկական կաթողիկէ եկեղեցու 30 հետեւորդներ[45]։

Օսմանեան հայազգի պետական եւ քաղաքական գործիչներ, ծագումով անեցի Ապրոյեանները, որոշ ժամանակ բնակուել են Բելգրադում։

1718ին Հռոմի Ուրբանեան դպրոցի աշակերտ, կարնեցի Խաչատուր վարդապետ Առաքելեանը, չկարողանալով կաթոլիկութիւն քարոզել Կ. Պոլսում, փախել է Սերբիա՝ իր գործունէութիւնը շարունակելու Բելգրադում[46]։ 1737ին Բելգրադի հայերը տեղափոխուել են Հունգարիա՝ հաստատուելով սահմանամերձ Ույվիդէք կամ Հայսոց քաղաքում։ ԺԸ. դարում հայերը սկսել են հաստատուել նաեւ այլ քաղաքներում (Նիշ, Զագրէբ, Կոսովօ, Օսիէկ, որի առաջին սրճարանատէրը եղել է Յովհաննէս Մանուկը)։

Սերբիայի հետ այլեւայլ առնչութիւններ են ունեցել նաեւ մերձակայ երկրների, յատկապէս Հունգարիայի, Ռումինիայի, Լեհաստանի հայ բնակիչները։ Հունգարահայ Կիշ, Լազար եւ Դանիէլ ընտանիքները տնօրինել են մեծ հողատարածութիւններ Բաչկայում եւ Բանատում[47]։ 1781ին սերբական Ժիտիշտէ կամ Բեգէյ Սվետի Դուրադ փոքր քաղաքը դարձել է հունգարահայ առեւտրական խոշոր Կիշի սեփականութիւնը։

Սերբական մշակոյթին իր նպաստն է բերել լեհահայ հեղինակ Տոդոր Աւրամովիչը, որը 1790ին Պեշում հրատարակել է գերմաներէն-սերբերէն բառարան[48]:

ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԺԹ-Ի. ԴԱՐԵՐՈՒՄ

Յատկապէս ԺԹ. դարում արեւմտահայութիւնը մի շարք առիթներ է ունեցել ճանաչելու Հարաւսլաւիայի ժողովուրդներին, որոնք նոյնպէս գտնուել են օսմանեան տիրապետութեան ներքոյ: Նրանցից բոսնիացիներին (մահմեդական հարաւսլաւցիներին) արեւմտահայերը ճանաչել են նրանց տրուած թուրքերէն անուանումով՝ պոշնաղ/պոշնագ, որտեղից էլ սերել է հայկական Պոշնաղեան ազգանունը: ԺԷ. դարի հեղինակ Յովհաննէս Կամենացին նրանց յիշել է պոսնացի, իսկ երկիրը՝ Պոսնա ձեւով[49]: Արեւմտահայութիւնը յատկապէս կապեր է ստեղծել Սկոպիէ (յայտնի նաեւ Ուշկուբ կամ Սկուպ անուններով) քաղաքի հետ, որն աշխարհագրականօրէն աւելի մօտ էր Կ.Պոլսին:

Սերբական նոր մշակոյթի եւ լեզուի զարգացմանը իւրովսանն նպաստել է Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը: Սերբ լուսաւորիչ, բանասէր, արդի սերբահորվաթերէն լեզուի հիմնադիր Վուկ Ստեֆանովիչ Կարաջիչը (Stefanović Karadžić, 1787-1864) իր պատմական բառարանը հրատարակել է Վիեննայի Մխիթարեան տպարանում: Նրա առաջին գրքերը լոյս էին տեսել Սերբիայում, սակայն առանց սերբական հոգեւոր առաջնորդի՝ միտրոպոլիտի արտօնութեան: Այս իրողութիւնը սաստիկ զայրացրել է սերբ կղերականներին, քանի որ այդ ժամանակ նրանց ձեռքին է եղել սերբերէն գրքեր տպագրելու մենաշնորհը: Կարաջիչն իր գործը տեղափոխել է Վիեննա, որտեղ չէր տարածւում միտրոպոլիտի ազդեցութիւնը: Տեղեկանալով, որ Մխիթարեան տպարանն ունի սլաւոնական (կիւրեղեան) տառամայրեր՝ նա 1818ին այնտեղ հրատարակել է իր կոթողային աշխատութիւնը՝ Սերբական Բառարանը: Դա պատմութեան մէջ առաջին սերբերէն գիրքն էր, որ գրուած էր նոր ուղղագրութեամբ, ժողովրդական լեզուով, միաժամանակ՝ առաջին սերբերէն եւ առհասարակ սլաւոնական գիրքը՝ տպուած Վիեննայի Մխիթարեանների մօտ[50]: Հետաքրքիր է նշել, որ Կարաջիչին հայ մամուլը (Թիֆլիսի Արձագանքը) առաջին անգամ անդրադարձել է նրա 100ամեակի առթիւ՝ նրա ազգանունը հանդէս բերելով Ղարաճիչ ձեւով[51]:

Կարաջիչից յետոյ Վիեննայի Մխիթարեանների տպարանում է հրատարկուել նաեւ սերբական առաջին այբբէնարանը (1827) եւ Զեռնոգորիայի իշխան, եպիսկոպոս եւ բանաստեղծ Պետար Բ. Պետրովիչ-Նիեգաշի

(Petrović-Njegoš, 1813-1851) *Լեռնային Պսակ* (Gorski vijenac) *փիլիսոփայական գիրքը* (1841)[52], *ինչպէս նաեւ Երեք օր Տրիեստում 1844ի Յունուար ամսին* (Tri Dana u Triestu u Mesecu Januariu 1844) *գիրքը* (1844)[53]:

1830ականների վերջին սերբական արքունիքում աշխատել է սառը զէնքերի նորոգող վարպետ Գրիգոր Մարկովիչը (Մարկոսեա՞ն): 1837ին նա իր միջոցներով հրատարակել է սերբ գրող, հոգեւորական Վիկենտի Ռակիչի գիրքը: 1856ին սերբական կառավարութիւնը նրան առաջարկել է հիմնել սրեր արտադրող ձեռնարկութիւն[54]:

1848-1852 Սերբիայի, Բոսնիայի եւ Հերցեգովինայի ազգային ազատագրական պայքարի վերաբերեալ բազմաթիւ հրապարակումներ են եղել հայ մամուլում (Եւրոպա, Հայաստան, Արշալոյս Արարատեան, Բանաստէր)[55]:

1877-1878ի ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի յաղթանակը վճռական դեր է ունեցել Սերբիայի եւ Չեռնոգորիայի անկախութեան նուաճման գործում, եւ Բեռլինի Վեհաժողովի որոշմամբ այդ երկու երկրները ստացել են անկախութիւն՝ ազատագրուելով օսմանեան դարաւոր լծից: Հայ մամուլում սկսել են յաճախ տպագրուել Հարաւսլաւիայի երկրների մասին պատմող նիւթեր[56]: Այս իրողութիւնը հայ մտաւոր շրջանակները տոգորել է լաւատեսութեամբ՝ յոյս ներշնչելով, թէ մի օր էլ Հայաստանը կը ստանայ անկախութիւն: Այս իրողութիւնն այլաբանօրէն ներկայացուել է նաեւ աշուղ Չիւանու երգերում: «Հօ Տառը» ծածկագիր բանաստեղծութեան մէջ Չիւանին աշխարհագրական անունները տուել է սկզբնատառերով՝ նշելով, որ «Հող»ն (Հայաստանը) երազում է «Սէ»ի (Սերբիայի) եւ «Բէն»ի (Բոսնիայի) պէս ազատագրուել եւ տեղ գտնել «բառգրքում» (աշխարհում): Մէկ այլ երգում նա գրել է, որ Քեռու (Ռուսաստանի) շնորհիւ ազատագրուել են Սրբուհի մօրաքոյրը (Սերբիան) եւ սիրուն Ելենան (Հերցեգովինան), իսկ Հայկուհին (հայ ժողովուրդը) եւ Մարիամը (Մակեդոնիան) դեռեւս արիւն են լալիս եւ յոյսով սպասում են իրենց ազատագրմանը: Չիւանին ազատագրուած Սերբիան յիշել է նաեւ «Հարաւի Մրմունջը» երգում՝ դարձեալ որպէս Հայաստանի նախկին բախտակից քրոջ[57]:

Ըստ 1895ի սերբական վիճակագրութեան՝ Սերբիայում բնակուել է 43 հայ, (որոնցից երեքը՝ կին) հետեւեալ պատկերով. Բելգրադ՝ 6, Վալեւօ՝ 3, Զայզար (հաւանաբար Զաղար)՝ 4, Նիշ՝ 5, Շաբաց՝ 4, Պոստարեւաց՝ 3, մնացեալը՝ այլ քաղաքներում, իսկ Բոսնիա-Հերցոգովինայում՝ միայն 3 հայ[58]: Նովի Սադում Ի. դարի սկզբին բնակուել է շուրջ 100 հայ, որոնք ակնառու տեղ են գրաւել քաղաքի հասարակական եւ մշակութա-

յին կեանքում, ընտրուել քաղաքային խորհրդի մէջ, եղել հարուստ առեւտրականներ։ Աչքի ընկնող ընտանիքներից էին Ճանազիզեանները, Մինասեանները, Աւետիքեանները եւ Իշեկուցները (Իսեկուցեան), իսկ Եոսիֆ Միստրովովիչը (Յովսէփ Մեսրոպեան) եղել է Նովի Սադի լաւագոյն ոսկերիչներից[59]։ Այս ժամանակաշրջանում Օսմանեան կայսրութիւնը տարբեր հայերի գանագան պաշտօններով ուղարկել է Հարաւսլաւիայի քաղաքներ։ Այսպէս, 1900ին օսմանեան կառավարութեան կողմից որպէս փոխհիւպատոս Օգիչէ (հաւանաբար Օսիէկ)՝ քաղաքն է ուղարկուել Յովհաննէս Էֆենդի Մաժակեանը[60]։ Սերբիայի Վրանիա քաղաքի օսմանեան դեսպանատանը պաշտօնավարել են Սկոպիէում ծնուած Զենոբ Սուրէնեանը (1910ից)[61] եւ Արիս Ֆեսճեանը (1868-1937)՝ Առաջին Բալկանեան Պատերազմի տարիներին (1912-1913)[62]։

Մասնաւորապէս 1910ականներին Սերբիային եւ Բալկանների հարցին յաճախակի է անդրադարձել հայ մամուլը[63]։ Յակոբ-Գրիգորի կարծիքով՝ հայերը ճակատագրով նման են սերբ եւ մակեդոնացի ժողովուրդներին։ «Սերպ ազգին տառապանքը, նախ Թուրքերու, յետոյ ալ Աւստրօ-Հունգարիոյ տիրապետութեան տակ, շատ կը նմանի հայերուս տառապանքին։ Անոնք, ինչպէս մենք, կռուեցան երկու բռնակալութիւններու դէմ, որոնցմէ մին՝ Թուրքը՝ որպէս հասարակաց թշնամի։ ...Պէտք է ճանչնանք այս ցեղին յատկութիւնները, սիրենք զինքն ու իր եզական ստեղծագործութիւնները՝ չափով մը հատուցանելու համար ա՛յն սէրը, զոր ցոյց տուին Եուգոսլաւները մեր ազգին հանդէպ»[64], ապա նաեւ՝ «Ճակատագրի բերումով նոյն կացութեան մէջ գտնուող հայ եւ մակեդոնացի ժողովուրդները զիրար դիւրաւ կը հասկնան եւ իրարու հետ միայն եղբայրական յարաբերութիւններ կրնան ունենալ»[65]։

Յայտնի է, որ Առաջին Բալկանեան Պատերազմում բուլղարական բանակի Մակեդոնա-Օդրինեան երկրապահ զօրքերի կազմում մարտնչել է Հայկական Կամաւորական Վաշտը՝ զօրավար Անդրանիկի գլխաւորութեամբ։ Այսպիսով, հայերը հանդէս են եկել որպէս Բուլղարիայի դաշնակից հարաւսլաւական պետութիւնների՝ Սերբիայի եւ Զեռնոգորիայի շահերի պաշտպաններ։ Սակայն Երկրորդ Բալկանեան Պատերազմի ժամանակ (1913ի Յունիս-Օգոստոս), երբ Բուլղարիայի դէմ միաւորուել են Սերբիան, Զեռնոգորիան, Յունաստանը, Ռումինիան եւ Օսմանեան կայսրութիւնը, այդժամ բուլղարական զօրքում մարտնչող հայորդիներն ակամայ դարձել են հարաւսլաւական ժողովուրդների հակառակորդը։ Նրանցից յատկապէս աչքի է ընկել փոխգնդապետ եւ զինուորական փաստաբան Կարապետ Վարդազարեանը Ֆիլիպէից։ Նա յայտնի է

դարձել սերբերի եւ յոյների դէմ մղուած ճակատամարտերում, ամբողջական ջոկատներ ազատելով կորստից[66]:

Առաջին Աշխարհամարտի տարիներին Հարաւսլաւիայի տարածքում օսմանեան բանակի կազմում հանդէս են եկել բազմաթիւ հայորդիներ, որոնց մի մասը գերի է ընկել: 1919ին Կ.Պոլսի Հայոց Պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսը յատուկ գրութեամբ դիմել է Կ.Պոլսի սերբական ներկայացուցչին՝ խնդրելով ազատ արձակել Բելգրադում գտնուող թուրքահայ եւ բուլղարահայ գերիներին: Պատրիարքն այդ առթիւ յայտնել է, որ դաշնակից երկրներն արդէն ազատ են արձակել իրենց հայ գերիներին՝ համարելով նրանց բարեկամ ազգի ներկայացուցիչներ[67]: Հայ գերիների ցանկը լոյս է տեսել Մարսէլի Արմենիա թերթում (9.03.1920), մի թղթակցութեան հետ միասին, որտեղ ներկայացուել է նրանց դառը վիճակը: Յօդուածում խնդրուել է Կ.Պոլսի Պատրիարքի կամ այլ պաշտօնական անձանց միջամտութիւնը՝ նրանց ազատ արձակելու հարցում: 1920ի Մարտի 22ին Արմենիային ուղարկուած նամակում նշուել է, որ Սահակ Գէորգեանը իբրեւ պատուիրակ բազմիցս դիմումներ է կատարել Հարաւսլաւիայի կառավարութեանը, եւ վերջապէս ազատ են արձակուել թուրքական եւ բուլղարական բանակներից առնուած հայ ռազմագերիները: Բոլորը ողջ-առողջ վիճակում Բելգրադից ուղարկուել են Սալոնիկ[68]:

Մնունդով քեմախցի վաճառական Սահակ Գէորգեանը (Սաւա Գէորգով կամ Գէորգիեւիչ, Georgiewitch), որ 30 տարի Հարաւսլաւիայի քաղաքացի է եղել, իր ձեռքում է ունեցել սուրճի առեւտրի մենաշնորհը Հարաւսլաւիայի մայրաքաղաքում, տեղական իշխանութիւնների հետ իր ունեցած յարաբերութիւններով ազդեցիկ դիրք է գրաւել Բելգրադում եւ մշտապէս աջակցել է հայ ազգային գործերի յաջող կարգադրութեանը[69]: Գէորգեանի ջանքերով Սերբիայի առեւտրի նախարար Վ.Վելկովիչը մի որոշմնագրով հաստատել է, որ Սերբիայում բնակուող հայերին պետութիւնը համարի սերբական քաղաքացիներ եւ առեւտրական տեսանկիւնից նրանց առանձնաշնորհումներ ընծայեն: Իր այդ քայլը Վելկովիչը պատճառաբանել է այն իրողութեամբ, որ հայերը պատերազմի ժամանակ եղել են սերբերի բարեկամները, եւ երբ կազմուի հայկական պետութիւնը՝ սերբերն էլ Հայաստանում պիտի վայելեն նոյն իրաւունքները, ինչ որ հայերը Սերբիայում: Երբ այս որոշումը տպագրուել է մամուլում, Սահակ Գէորգեանը հայ ազգի անունից շնորհակալութիւն է յայտնել Վելկովիչին՝ հայ ազգի գործունէութիւնը եւ առեւտրական ձիրքը գնահատելու համար[70]: Երբ 1920ի Փետրուարի 26ին Աւե-

տիս Ահարոնեանը Գէորգեանին առաջարկել է լինել Բելգրադում Հայաստանի պատուոյ հիւպատոս, վերջինս պատասխանել է, որ ինքն արդէն սերբական իշխանութիւններից ունի հայկական անձնագրերը վաւերացնելու լիազօրութիւն: Նա նաեւ յայտնել է, որ շատ երիտասարդ հայորդիներ կամենում են մեկնել Հայաստան եւ մարտնչել[71]: 1920ի Հոկտեմբերի 1ին Հայաստանի Հանրապետութիւնը Գէորգեանին նշանակել է պատուաւոր փոխհիւպատոս[72]:

1919-1920թվականներին Հայ Ազգային Պատուիրակութիւնը բանակցել է սերբ-հրովթ-սլովէնական պատուիրակութեան գլխաւոր քարտուղարի եւ Սերբիայի Արտաքին Գործերի Նախարար Նինչիչի հետ՝ Հայկական Հարցի, Հայաստանի վերաբերեալ գրականութեան եւ տեղեկագրերի առաքման եւ պատուիրակութեան անդամ Միհրան Սվազլիի կողմից Հարաւսլաւիայում հայկական օջախ ստեղծելու առաջարկի մասին[73]: 1922ին Հայ Ազգային Պատուիրակութիւնը դիմել է Սերբիայի, Բուլղարիայի եւ Ռումինիայի կառավարութիւններին՝ հայ գաղթականներին ընդունելու խնդրով: Այս ժամանակաշրջանում սերբ-հայկական գօրակցութեան արտայայտութիւնների ենք հանդիպում նաեւ այլ երկրներում: Այսպէս, 1918ի Մայիսի 30ին Միացեալ Նահանգների Դիմրոյթ քաղաքում տեղի ունեցած մեծ ցոյցին մասնակցել են քաղաքի հայկական եւ սերբական, ինչպէս նաեւ այլ ազգութիւնների կազմակերպութիւններ: Յատկանշական է, որ սերբերի կարգախօսը եղել է «պատերազմը Հայաստանէն կը վերջանայ»[74]:

Մեծ Եղեռնից եւ 1922ի Զմիւռնիայի աղէտից յետոյ Հարաւսլաւիա հասած սակաւաթիւ հայերը՝ պոլսեցիներ, կիլիկեցիներ եւ քեմախցիներ (դարանաղցիներ), հիմնականում ապաստանել են Բելգրադում եւ Սկոպիէում, ինչպէս նաեւ ուրիշ քաղաքներում (Նիշ, Վրնիաչկա Բանիա, Կրուշեւաց, Զայչար, Նեգոտին, Կնիաժեւաց եւն.)[75]: Սերբիայի աշխարհագրական դիրքը եւ ժողովրդի նկարագիրը յատուկ ձգողականութիւն են ունեցել հայերի համար[76]: Ինչպէս յիշել է հին սերբահայերից մէկը՝ Մարի Բարոնեանը. «Սերբերը մեզ եւ միւս գաղթականներուն սրտաբաց ընդունեցին, եւ մենք ալ սիրեցինք հիւրընկալ ու ազնիւ այդ ժողովուրդը.... յարմարուեցինք միջավայրին, շատերը բացին մեծ ու փոքր խանութներ ու սկսեցին սուրճի գործ ընել, քանի որ ատ շահութաբեր գործ մըն էր: Մեր զաւակներն ալ սերբական դպրոց ձգեցինք, քանի որ Բելգրադին մէջ հայկական դպրոց չի եղած եւ հիմա էլ չկայ, բայց ընտանիքում հայերէն կը խօսէինք, որ զաւակներս գոնէ լսելով սորվէին իրենց մայր լեզուն»[77]: Յատկանշական է, որ մրցակցու-

թիւնից եւ նրա անախորժ հետեւանքներից խուսափելու համար նոր գործ սկսող հայերն ընտրել են այնպիսի քաղաքներ, որտեղ սուրճի գործով զբաղուող հայ չլինի[78]:

1922ի տուեալով՝ Սերբիայում եւ ողջ Հարաւսլաւիայում բնակուել են 165 հայեր (86 տղամարդ, 38 կին, 41 երեխայ), մեծ մասամբ քեմախցիներ, նաեւ որոշ թուով սերաստացիներ եւ պոլսեցիներ: Քեմախցիների մեծաթիւ ներկայութիւնը Հարաւսլաւիայում կարելի է թերեւս բացատրել հաստատուած առաջին ընտանիքների կողմից իրենց ազգականներին հրաւիրելու եւ ապա վերջիններիս կողմից իրենց միւս հարազատներին իրենց կերպ կանչելու շղթայակերպ մոդէլով: Շատ քիչ բացառութիւններով բոլորը զբաղւում են առեւտրով, այն դէպքում, երբ իրենց հայրենիքում հողագործներ են եղել: Հինգ-վեց հոգի բարձրագոյն կրթութիւն ունեն (3 բժիշկ, 4 դեղագործ, մէկ լեզուաբան), կան նաեւ մի քանի ուսանողներ:

1924ին Սերբիայում հաստատուած առեւտրական Լուիֆիկ Կիւլմէզեանին յաջողուել է երկրում ստանալ գորգագործութեան մենաշնորհ եւ Բելգրադում հաստատել գորգի գործարան: Նա մեկնել է յունական Կորֆու կղզին՝ այնտեղ գտնուող ազչեհիրցի գաղթականների միջից գորգագործութեան վարժ գործաւորուհիներ գտնելու եւ Սերբիա տանելու համար, որը նրան չի յաջողուել[79]: Այդ գործը յաջողեցրել է Սերբիայի Պեշկերէք քաղաքից գործարանատէր Մ. Իլիճին, որն իր ֆաբրիկայի կից հաստատել է գորգագործարան եւ Կորֆուից բերած 25 հայ աղջիկների եւ որբուհիների համար մշտական գործ է ապահովել: Գորգագործարանը ղեկավարել է Պետրոս Ադամեանը[80]:

Բելգրադում հաստատուած քեմախցիները ունեցել են իրենց հայրենակցական միութիւնը, որը 1925ի Յունուարի 30ին գումարած ժողովով ընտրել է նոր վարչութիւն եւ անուանուել «Դարանագեաց Հայրենակցական Միութիւն»: Այս միութիւնը նպատակադրել է օգնել Հարաւսլաւիա եկող հայերին՝ հնարաւորութիւն տալով նրանց ինքնարաւ լինել, նիւթապէս ոտքի կանգնել: Անդամները որոշել են կապեր հաստատել Սերբիայում, Յունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում եւ ԱՄՆում հաստատուած բոլոր քեմախցիների հետ եւ համընդհանուր նիւթական եւ բարոյական աջակցութեամբ մի գիւղ հիմնադրել Երեւանի շրջանում[81]: Ստեղծուել է 90 հազար դինարի հասնող հիմնադրամ: Սակայն այդ դրամից օգտուող չի եղել եւ պետական դրամատունը պահ տուած՝ մնացել է անձեռնմխելի[82]:

1932ին հիմնուել է Բելգրադի Հայոց Միութիւնը, որը սեփական միջոցներով գնել է Դալմատինսկայա փողոցի թիւ 78 հասցէում գտնուող շէնքը՝ յայտնի որպէս Հայկական Տուն։ Այստեղ պարբերաբար հաւաքուել են քաղաքի հայերը, հնչել է հայկական երգ-երաժշտութիւն, դասախօսել են հայոց պատմութեան վերաբերեալ, հայոց լեզու է դասաւանդել Սալոնիկից տեղափոխուած Նոյեմի Մանաշեանը, հայոց պատմութիւն՝ Ասատուր Մկրտչեանը։ Գործել է փոքրիկ երգչախումբ՝ Գրիգոր Մորճիկեանի ղեկավարութեամբ[83]։ Հայոց Միութեան միջոցները գոյացել են միանուագ մուտքի վճարումներից, անդամավճարներից, նուիրատուութիւններից, կազմակերպուած հանդէսներից ստացուած հասոյթներից։ Միութեան տրամադրութեան տակ է դրուել Դարանաղեաց Հայրենակցական Միութեան հաւաքած 90 հազար դինար գումարը։ Բելգրադի հայերը ծրագրել են կառուցել նաեւ Ազգային տուն՝ այդ նպատակի համար հանգանակելով 40 հազար դինար[84]։ Այս ձեռնարկը, սակայն, մնացել է անկատար։

«Հայկական Տուն»ը գործել է մինչեւ 1941, գործունէութիւնը դադարել է Բ. Աշխարհամարտի տարիներին, իսկ 1952ին Սերբիայի համայնավարական իշխանութիւնները փակել են այն։

1933ի տուեալով՝ Բելգրադում բնակուել է 120-130 հայ, ներառեալ 15-20 երեխաներ, որոնք յաճախել են սերբական դպրոցներ։ Մեծ մասամբ եղել են խանութպաններ՝ տնտեսական լաւ վիճակով, բացառութեամբ մի քանի ընտանիքի[85]։ Այս թուականին հայ մամուլին ուղարկուած մի թղթակցութիւն ահազանգել է հայ կեանքի ներկայ վիճակի վերաբերեալ։ Այնտեղ մասնաւորապէս նշւում է, որ ոչ կուսակցութիւնը (նկատի ունեն Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը), ոչ եկեղեցին հոգ են տանում փրկելու համար փոքրաթիւ, բայց բարեկեցիկ համայնքը։ «Գաւառներու մէջ բնակուող Հայերու ազգային վիճակը ալ աւելի սեւ է։ Այլասերումը այնքան առաջ գացած է որ, մօտ ապագային ոչ մէկ հայկական ընտանիք պիտի կրնանք գտնել։ ....Անցեալ տարի կաթողիկոսական ընտրութեան առթիւ ժողով մը տեղի ունեցաւ, ուր ընտրուեցաւ առժամեայ վարչութիւն մը բարեգործական ընկերութեան մը ծրագիրը պատրաստելու եւ արտօնութիւն ստանալու համար։ Բայց ոչ ոք գիտէ, թէ յարգոյ վարչութիւնը ի՞նչ կ՚ընէ...»[86]։

1937ի Փետրուարի 14ին Բելգրադում կայացել է Հարաւսլաւիայի Հայերի Երկրորդ Տարեկան Ժողովը։ Զեկուցուել է, որ մէկ տարուայ մէջ 54,929 դինարի մուտք եւ 18,480 դինար ելք է եղել։ Ժողովն ընտրել է նոր վարչութիւն առաջիկայ տարուայ համար[87]։

Սկոպիէում ազգանուէր գործունէութեամբ է զբաղուել Մարտիրոս աւագ քահանայ Գալֆայեանը, որն անխոնջ եւ անվաստակ տքնել է՝ ոչ միայն տեղի հայութեան կրօնական պէտքերը հոգալու, այլեւ նոր սերնդին հայոց լեզու ուսուցանելու գործում։ Նրա մահը 1930ականների սկզբին մեծ կորուստ է եղել Սկոպիէի հայութեան համար[88]։

1933ին Սկոպիէի հայերի մէջ յիշւում են հետեւեալ անձինք. Յովսէփ Պոյաճեան՝ սերբական պետական բանակի եւ հիւանդանոցների ճանաչուած բժիշկ, Պօղոս Արմաղանեան եւ Յակոբ Պիքիճեան՝ գլխակապի առեւտրականներ, Կարապետ Դաւիթեան՝ բժիշկ, ներքին եւ մանկական հիւանդութիւնների մասնագէտ, նաեւ գրող (որդին բժիշկ-լեզուաբան Ստեփան Դաւիթեանի[89]), Կարապետ Կարապետեան՝ ապուխտ եւ երշիկ արտադրող, Վ. Գալֆայեան՝ ատամնաբոյժ, Նիկողայոս Արտեմեան՝ պետական ծխախոտագործութեան փորձագէտ, Ահարոն Թ.՝ սրճագործ, Կարապետ Քէօմիւրճեան, Ար. Միքայէլեան՝ ոսկերիչ, Յակոբ Ղուկասեան, Յակոբ Ճըրճըրեան՝ մուշտակավաճառ, Մահտեսի Աւետիս Նաթանեան՝ մեծահարուստ, անգլիական հիւպատոսարանի փոխ-հիւպատոս, Լեւոն Մելքոնեան՝ բժիշկ, Յարութիւն Գալփաքճեան, Թադէոս Քանտի՝ դեղագործ, Աբրահամ Սիւրմէլեան՝ աղիքի վաճառական, Միքայէլ Բիոսեան՝ դեղագործ, Վարդգէս Բիոսեան՝ ելեկտրագէտ, Մինաս Քիւրքլեան, Յակոբ եւ Կարապետ Թաշճեաններ՝ ձիարշաւի ձիերի տէրեր[90]։ Սալոնիկից Սկոպիէ տեղափոխուած Յակոբ Սավոյեանցը քաղաքում հիմնել է մի խոշոր հաստատութիւն[91]։ 1920ականներին 10-12 հայ ընտանիք է բնակուել նաեւ Մակեդոնիայի Սորովիչ քաղաքում. նրանք աշխատել են երկաթուղային կայարանում, հաց վաստակել՝ վագոններ դատարկելով։ Նրանց մէջ եղել են նաեւ պայտագործներ[92]։

1928ին Սարայեւոյի մօտակայ մի գիւղում է հաստատուել իզմիրցի Թագուոր Թագուորեանը, որը 20 տարի բնակուել էր Գերմանիայում։ 1929ի ձմռանը նա սպանուել է խորհրդաւոր պայմաններում[93]։

Փոքրաթիւ սերբահայերն անտարբեր չեն եղել իրենց փոքրիկ հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հանդէպ։ 1927ին Շիրակի երկրաշարժից յետոյ նրանք կատարել են հանգանակութիւն եւ աղէտեալների օգնութեան հիմնադրամին են ուղարկել 16580 դինար։ Հայրենակիցների օգնութեանը նպաստ բերած այդ 27 սերբահայերի ցուցակը հրատարակուել է Յառաջ թերթում, որտեղից իմանում ենք, որ այդ ժամանակաշրջանում Հարաւսլաւիայում հայեր բնակուել են ոչ միայն Բելգրադում եւ Սկոպիէում, այլեւ Նիշ, Զայչար, Զուպրիա, Պալանկա, Մլադինո-

վաց, Պիրոտ, Օպրենովաց, Կրակույիվաց, Վալեւо, Սվիլայնաց, Պոժարեւաց, Տրստենիկ եւ Արանջելովաց բնակավայրերում[94]:

Համախմբող մարմիններ չունենալը, փոքր թիւը եւ խառնամուսնութիւնները արագացրել են Հարաւսլաւիայի հայերի ձուլումը։ Արդէն 1930*ականներին տեղի հայ մտաւորականներն ահազանգել են հարաւսլաւահայերին սպառնացող ուծացման եւ ձուլման վտանգի դէմ։ Նովի Սադի հայ եկեղեցու ղեկավար, յայտնի բանասէր, Մխիթարեան Միաբանութեան անդամ, Հանդէս Ամսօրեայի երբեմնի խմբագիր Գաբրիէլ ծայրագոյն վարդապետ Մենեւիշեանը* (1864-1936), *որը մահացել է Նովի Սադում,* 1933*ին հետեւեալն է գրել հարաւային Սերբիայի հայութեան մասին.* «Հոս ալ վտանգը մեծ է՝ ինչպէս նաեւ բովանդակ Սերպիոյ մէջ գտնուած հայութեան... Պելկրատ մայրաքաղաքն իսկ՝ դարերէ ի վեր ունի իր պատերուն մէջ հայազգի ընտանիքներ, հարուստ ու աղքատ, ճարպիկ ու թոյլ, ծոյլ ու գործունեայ հայորդիներ, բայց կազմակերպեալ գործարանաւորութեան պակասութիւն է, չկան հոն ոչ մատուռ, ոչ քահանայ, ոչ եկեղեցի, ոչ դպրոց, ոչ ժողովատեղի, ոչ համարում իրարու եւ ոչ ազգախնամ հոգատարութիւն»։ *Ըստ Մենեւիշեանի՝ վիճակն է՛լ աւելի տխուր է Սկոպիէում.* «Կը կորսուի անպատճառ հայութիւնը հոն, ուր աղերսն ու յարաբերութիւնը՝ ազգին մեծազանգուած մասին հետ կը խլուի»[95]։ *Նա ցաւով նշել է, որ օտար դպրոց գնացող հայ մանուկն արագ օտարախօս է դառնում, հայ երիտասարդը նախընտրում է օտարուհու հետ ամուսնանալ, իսկ գաղութում ընդարմացած է ձեռներէցութեան ոգին, նկատւում է համատարած անտարբերութիւն*[96]։ *Սակայն Մենեւիշեանը տակաւին յոյս է ունեցել, թէ ամէն ինչ կորած չէ,* «Յուսալիք կէտն այն է, որ նորափթիթ Սկոպլիյէի (sic) մէջ ապրող մեր ազգակիցներէն շատ շատերը մինչեւ հիմա աննպաստ պարագաներու մէջ կրցած են քիչ թէ շատ պահել իրենց հայութիւնը»[97]։

Հարաւսլաւիայի մեծագոյն օրաթերթը՝ Բելգրադի Պոլիտիկան, 1935*ի Ապրիլի* 15*ի համարում անդրադարձել է Նովի Սադի հայ համայնքի ձուլման եւ կորստեան փաստին՝ ներկայացնելով նաեւ հայր Գաբրիէլ Մենեւիշեանի եւ հայկական եկեղեցու լուսանկարները։* «Ամէն ոք կը ճանչնայ տասը լեզու խօսող այդ ալեւոր Հայրը։ Կարելի է իրեն հանդիպիլ Նովի Սատի շուկան գնումներու պահին, զամբիւղը ձեռքը։ Անհոս եկեղեցին բնական է որ հասոյթի աղբիւրներ չունի, բայց գտնուելով գիւղի կեդրոնը՝ Աղեքսանդր պողոտայի վրայ, առանց այցելու չի մնար։ Անտարակոյս [տեղացի] կաթոլիկները չեն երթար հոն աղօթելու, մինչ բողոքականները եւ բարենորոգչականները յաճախ կ՚այցե-

լեն, քանի որ առաջինները պաշտամունքի վայր չունին, իսկ միւսներունը գիտին կեդրոնէն շատ հեռու է: Հայ եկեղեցին առաւօտէն մինչեւ երեկոյ բաց է. այս իսկ պատճառաւ շրջականերէ եկող հիւրեր կ'այցելեն»[98]:

Նոյն թերթը յիշել է, որ հայ համայնքը ժամանակին մեծ թիւ է կազմել, շատ ընտանիքներ բազմազաւակ են եղել, մինչեւ անգամ յիշուած է մի փաստ, որ մի հայուհի միանգամից երեք զաւակ է ունեցել: Սակայն հայկական անցեալը յուշ է մնացել, եւ այդ ամէնից մնացել է միայն մէկ անհատ՝ հայր Մենեւիշեանը, առանց ծխի, առանց որեւէ գործունէութեան: Այս առթիւ Յակոբ-Գրիգորը ցաւով նշել է. «Կարելի չէ՞ր որ դաւանական խտրութիւնները մէկ կողմ դնելով ծաղկեցնէինք բոլո՛ր Հայերս՝ միացած Եուգոսլաւիոյ միակ հայ եկեղեցին, որ առանց Հայու մնացե՛ր է... Բելգրադի ու Սկիպի հայ գաղութը՝ բոլորն ալ հայադաւան՝ սիրով պիտի օգնեն Նովի Սադի հայ եկեղեցին: Հայր Գաբրիէլ կրնայ հայադաւան քահանայ մը գտնել, եւ անոր միջոցով Եուգոսլաւիոյ բոլո՛ր Հայերը խմբել Նովի Սադի հայ եկեղեցիին շուրջ: Իր անկեղծութեան վրայ չենք կասկածիր»[99]:

1935ին Հարաւսլաւիայում բնակուել է 500 հայ, գլխաւորապէս՝ Բելգրադում եւ Սկոպիէում[100]: *Սակայն հակառակ այդ փոքր թուին՝ հայութիւնը տեղացիների կողմից անծանօթ տարր չի եղել*[101]: *1939ի տուեալով Հարաւսլաւիայում բնակուել է 452 հայ, որոնցից Բելգրադում՝ 142 հոգի, Սկոպիէում՝ 200 (45 ընտանիք): Մտադիր են եղել վաճառել Նովի Սադի հայկական եկեղեցին՝ մօտ 300 հազար դոլարով*[102]:

Ինչպէս արդէն նշուեց, Նովի Սադում հայկական համայնք չլինելու պատճառով եկեղեցին դադարել է գործել եւ 1964ին քանդուել սոցիալիստական իշխանութեան կողմից:

1930ականներին հարաւսլաւական մամուլը զգալի հետաքրքրութիւն է ցուցաբերել հայ ժողովրդի զաւակների քաղաքակրթական եւ մշակութային նուաճումների հանդէպ: Յատկապէս Սկոպիէի Vardar (գետի անուն) եւ Բելգրադի Vreme (ժամանակ) օրաթերթերի աշխատակից, գրող-հրապարակախօս Լիուբո Ստոյովիչը (Ljubo Stojović, ծն. 1909) *1935ի Ապրիլի 10ին մի յօդուած է հրատարակել, որ ներկայացնում է Սկոպիէի պատմութեան մէջ հայերի ունեցած դերը: Յօդուածի ենթավերնագրերն են՝* «Սկոպիէի հայերի մասին, որոնք մեր անկեղծ քաղաքացիներն են, Հայերն էին, որ առաջին անգամ էլեկտրական լոյս բերեցին Սկոպիէ: Նաեւ հայերն էին, որ առաջին ջուրը բերեցին Սկոպիէ»: *Անդրադառնալով հայ ժողովրդին՝ որպէս աշխարհում առաջինը*

քրիստոնէութիւն ընդունած ազգի, Ստոյովիչն անդրադարձել է Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական ջարդերին։ Ահա այս օսմանեան սուլթանը հայ յեղափոխականների է աքսորել նաեւ Սկոպիէ։ Նրանցից էր հայ Արմենական (Ռամկավար) Կուսակցութեան դէմքերից Հաջի Աւետիս Նաթանեանը, որ սերել է Վանի յայտնի գերդաստանից եւ, ինչպէս նշուեց, եղել է բրիտանական փոխհիւպատոսը Սկոպիէում մինչեւ Ա. Աշխարհամարտը։ Ստոյովիչը վկայել է, որ Սկոպիէ քաղաքում առաջին ելեկտրական լոյսը բերողը 1911ին եղել է ծնունդով կեսարացի ինժենէր Մկրտիչ Ճամճեանը, որը յետագայում բերել է նաեւ խողովակով ջուր։ Օսմանեան անտառապահական վարչութեան տնօրէն Արամ Հալէբեանը մեծ ներդրում է ունեցել Սկոպիէի կանաչապատման գործում։ Հարաւսլաւական բանակի փոխգնդապետ բժիշկ Յովսէփ Պոյաճեանը մեծ օգուտ է տուել Սերբիայի ռազմական կեանքին։ Կեսարացի բժիշկ Կարապետ Ս. Դաւիթեանը Հարաւսլաւիայում տարածուած հիւանդութիւնների, յատկապէս մալարիայի (տենդ) մասնագէտ է եղել։ Իսկ նախկին դեղագործ Միքայէլ Բիոսեանը եղել է հարաւային Սերբիայի գրեթէ բոլոր հանքերի գիտակ՝ այդպիսով օգտակար հանդիսանալով հարաւսլաւական իշխանութիւններին[103]։

Հայերին յաճախակի անդրադարձել է նաեւ Բելգրադի Vreme թերթը, որի սերը խմբագիրը եղել է սուրճի վաճառական Սահակ Գէորգեանի փեսան։ Վերջինս եղել է ազգային երեսփոխան, հարաւսլաւական խորհրդարանի ընդհանուր քարտուղար, հայերի անկեղծ բարեկամն էր եւ իր թերթի էջերում բազմիցս ծանօթացրել է հայ ժողովրդին։ Հայ ժողովրդին եւ հայ եկեղեցին մօտիկից ճանաչել եւ գնահատել է նաեւ 1930-1937 Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Համայն Պատրիարք, սերը նշանաւոր կրօնական գործիչ Վառնաւան (Varnava Rosić, 1880-1937)[104]։

1936ին Բուլղարիայի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Գրիգոր ծայրագոյն վարդապետ Կարապետեանն այցելել է Բելգրադի հայերին, քանի որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով նա ստանձնել է նաեւ Հարաւսլաւիայի հայերի հովուութիւնը։ Մինչ այդ Բելգրադի հայոց հոգեւոր կարիքները հոգացել է Բելգրադի պատրիարք Վառնաւան։ Գրիգոր վարդապետը պատարագել է Գաղութային Վարչութեան անդամ եւ ազգային գործիչ Մամաս Դաւիթեանի բնակարանում։ Մօտ 50 հոգի այդ օրը հաղորդութիւն են ստացել։ Բելգրադի եւ Սկոպիէի հայերը որոշել են գնել ազգային տուն, որը ծառայելու է որպէս մատուռ, խորհրդարան եւ քահանաների բնակարան[105]։ Գրիգոր վարդապետը տեղեկացրել է, որ Բելգրադում բնակւում է 140 հայ ընտանիք (35 ընտանիք, մնացեալը՝ ա-

մուրիներ), որոնք մեծ մասամբ զբաղուում են սրճագործութեամբ, նպարավաճառութեամբ եւ նիւթապէս ապահովուած են։ Նրանք կազմել են 12 հոգուց բաղկացած Բելգրադահայ Գաղութային Վարչութիւն հետեւեալ կազմով- նախագահ՝ Յարութիւն Պաղտասարեան, փոխնախագահ՝ Խորէն Կարապետեան, քարտուղար՝ Յարութիւն Չալրքեան, գանձապահ՝ Սամուէլ Կոկանեան, խորհրդականներ՝ Գրիգոր Սեմերճեան, Յարութիւն Շէխեան, Վահան Գուրթեան, Վահրամ Վարդանեան, հաշուեքննիչ՝ Վահան Միրախորեան, Ռուբէն եւ Ասատուր Մկրտիչեան (Բուլղարեւհայ Բառարանի հեղինակը)։ Գրիգոր վարդապետի վկայութեամբ, Նիշում բնակուել է երեք հայ ընտանիք, Սկոպիէում՝ 25։ Այստեղ եւս կազմուել է Գաղութային Վարչութեան մասնաճիւղ՝ ենթակայ Բելգրադի Գաղութահայ Վարչութեանը։ Ենթավարչութեան նախագահն էր գնդապետ Յովսէփ Պոյաճեանը, գանձապետը՝ Պօղոս Արմաղանեանը, քարտուղարը՝ Յակոբ Ճըրճըրեանը։ Գրիգոր վարդապետը յարգոյ այցելութիւն է կատարել նաեւ Հայաստանի առաջին հանրապետութեան Սերբիայի պատուոյ հիւպատոս Սաւա Գէորգեանի շիրմին[106]։

1940ին Բելգրադում կայացել է Հարաւսլաւիայի Հայերի Ազգային Վարչութեան տարեկան հինգերորդ ընդհանուր ժողովը, որին մասնակցել են շուրջ 40 երկսեռ անդամներ։ Վարչութեան նախագահ Պաղտասարեանն առաջարկել է ընդհանուր ժողովի անունից Հարաւսլաւիայի թագաւոր Պետր Բ-ին արեւշատութեան հեռագիր յղել[107]։

Երկրորդ Համաշխարհային Պատերազմը մեծ անպատեհութիւններ եւ դժբախտութիւններ է ստեղծել Հարաւսլաւիայի հայութեան համար[108]։ Նրանցից շատերը մասնակցել են գաւթիչների դէմ հարաւսլաւական ժողովրդի պայքարին[109]։ Համայնավարական վարչակարգի հաստատումից յետոյ շատ հայեր արտագաղթել են ԱՄՆ, Կանադա, Բրազիլիա, եւրոպական այլ երկրներ։

ԱԿԱՆԱՒՈՐ ՀԱՐԱՒՍԼԱՒԱՀԱՅԵՐ

Հարաւսլաւիայի հայութիւնը չի ունեցել խիստ կազմակերպուած համայնքային կեանք։ Տեղական առումով, այն սակայն տուել է աչքի ընկնող անհատներ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ։

Դեռեւս Առաջին Բալկանեան Պատերազմից շատ տարիներ առաջ, սալոնիկցի Յակոբ Փիւսքիւլճեանը առաջին անգամ պատրաստել է «քաշքաւալ» կոչուող նշանաւոր պանիրը, որ դարձել է Մակեդոնիայի արտածման գլխաւոր ապրանքատեսակներից։ Մակեդոնուհի Սիտիչը

ատենախօսութիւն է պաշտպանել քաշքաւալի մասին՝ մակեդոնահայերից տեղեկութիւններ հաւաքելով Փիւսքիւլճեանի վերաբերեալ[110]:

Բուլղարական հայազգի գրող, թարգմանիչ, հրապարակախօս, դասական մշակոյթի մասնագէտ Ալեքսանդր Բալաբանովի (1879, Շտիպ, Մակեդոնիա-1955) հօրենական պապը՝ Մանօ (Մանուկ) Քեհայեանը, եղել է Փոքր Ասիայից, Սկոպիէի մեջլիսի նախագահը եւ քաղաքի դպրոցներից մէկի հիմնադիրը, իսկ հայրը՝ Միքայէլ Բալաբանովը (Միխայէլ Բալաբանեան), եղել է բժիշկ՝ Շտիպ քաղաքում: Ի դէպ, Ալեքսանդր Բալաբանովի եղբայրը մնացել է Մակեդոնիայում՝ դառնալով մակեդոնական բանակի սպայ՝ Բալաբանովիչ անունով[111]:

Հարաւսլաւիայի պատմութեան ականաւոր դէմքերից մէկին՝ Նիկոլա Պաշիչին (Nikola Pašić, 1845-1926) վերագրւում է հայկական ծագում: Այս մասին վկայել է Հարաւսլաւիայում բնակուած տնտեսագէտ Վահան Տոտոմեանցը Բելգրադում հրատարակած Հայերի Դերը Համաշխարհային Քաղաքակրթութեան մէջ գրքոյկում, մասնաւորապէս նշել է, թէ վերջինիս հակառակորդները պարսաւանքի թիրախ են դարձրել նրա հայկական ծագումը[112]: Պաշիչի հայկական ծագումը կրկնել է Յակոբ-Գրիգորը՝ նշելով, որ նրա նախնիները եղել են Փաշայեաններ[113]: Այսօր հարաւսլաւցիներն անտեղեակ են այս իրողութեանը, սակայն չենք կարող չվստահել Տոտոմեանցի պէս լուրջ մի գիտնականի հաւաստիացմանը, որը բնակուել է Հարաւսլաւիայում եւ քաջատեղեակ է եղել այդ երկրի պատմութեանն ու լեզուին: Նիկոլա Պաշիչը փաստօրէն Հարաւսլաւիայի ստեղծողն էր, որը եղել է նախ Սերբիայի վարչապետ եւ արտաքին գործերի նախարար (1891-92, 1904-18), ապա՝ դեսպանորդ Ռուսաստանում (1893-94), իսկ յետագայում՝ Սերբերի, Հորվաթների եւ Սլովէնների միացեալ թագաւորութեան վարչապետը (1921-1926):

Նիկոլա Պաշիչը անտարբեր չի եղել հայ ժողովրդի ճակատագրի հանդէպ: Այդ է վկայում Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում պահուող նրա մի ֆրանսերէն հեռագիրը՝ գրուած 1913ի Յունուարի 11ին, Բելգրադից ուղղուած Աղեքսանդրիա՝ հոգեւորական գործիչ Ռուբէն Գարիկեանին: Ներկայացնում ենք ցարդ անտիպ հեռագրի ֆրանսերէն բնագիրը.

La population arménienne jouissant d'une grande sympathie de la nation serbe la peuple serbe fera tout ce qu'il pourra en faveur et pour améliorer le sort des populations chrétiennes d'Anatolie.

Pachitch[114]

Հարաւսլաւ դիւանագէտ եւ լրագրող Ալեքսանդր Մալխասունին (դը Մալխագունի) սերել է երեւանցի ազնուական ընտանիքից։ Եղել է վերոյիշեալ Հաջի Աւետիս Նաթանեանի ազգականը։ Նա ծնուել է Սկոպիէում (այլ տուեալով՝ Ֆիլիպպէում, Բուլղարիա), մահացել 1914ին, Փարիզում։ Եղել է Կ.Պոլսի Աւստրիայի հիւպատոսարանի թարգման։ Ապա տեղափոխուել է Մակեդոնիա։ Նիկոլա Պաշիչի կողմից նշանակուել է Սերբիայի հիւպատոս Փարիզում։ 1900ին Փարիզում կայացած համաշխարհային ցուցահանդէսում ներկայացուել է նրա ջանքերով ստեղծուած սերբական ազգագրական թանգարանը։ 1906ին նրա մասին առաջին անգամ գրել է Ջենոր Սուրէնեանը, որը մանկութեան տարիներից ճանաչել է նրան, յետագայում նրան յիշելով որպէս «զաւ դիւանագէտ, արկածախնդիր լրագրող մը»[115]։ Ի դէպ, Մալխասունու դուստրը՝ Փարիզի օպերայի պարուհի Մարիամ Մալխասունին (Մարիան դը Մալխագունի), 1933ին ամուսնացել է Անգլիայի Լիծի դուքս Ջոն Ֆրանսիս Օգբորնի հետ։ Լիծի դքսական գերդաստանը դէմ է եղել այդ ամուսնութեանը եւ մի քանի ամիս աշխատել է խափանել այն, սակայն Ջոն Ֆրանսիսն ի վերջոյ կատարել է իր որոշումը[116]։

1910ականներին է գործել հայազգի պետական գործիչ Սմայլ (հաւանաբար Իսմայիլ) Ջենկիչը, որը ծնուել է Թուրքիայում, պաշտօնավարել՝ Սերբիայում։ Նրա մահուան առթիւ, 1927ին բանաստեղծ Իւան Մանջուրիանիչը գրել է բանաստեղծութիւն[117]։

Արդէն մի քանի անգամ յիշատակուած բժիշկ Յովսէփ Պոյաճեանը (ծն. 1888, Եդեսիա) բժշկական ուսումը ստացել է Կ.Պոլսում եւ Ժընեւում։ 1914ին Ֆրանսիացի բժիշկների հետ մեկնել է Սերբիա՝ որպէս պայմանագրեալ բժիշկ բանակի մէջ աշխատելու։ Հարաւային Սերբիայի Տետովօ քաղաքում բարձրացել է բժշկապետի աստիճանի։ Նոյն պաշտօնով մեկնել է Բիտոլ, Տիրանա եւ այլ քաղաքներ։ Երբ սերբական բանակը քաշուել է Սալոնիկ, Պոյաճեանն էլ մեկնել է այնտեղ եւ 1916ին սերբ զինուորականների հետ կրակի առաջին գծում է գտնուել։ Հակառակ սպայ լինելուն՝ հասարակ զինուորի պէս կռուել է խրամատներում։ Պատերազմի աւարտից յետոյ հարիւրապետի մնայուն պաշտօն է ստացել հարաւսլաւական բանակում։ 1922ին գլխաւորել է ի նպաստ հայ որբերի կատարուած հանգանակութիւնը եւ տուել է կարեւոր գումար։ 1935ին եղել է Սկոպիէի մեծագոյն զինուորական հիւանդանոցի վարակիչ հիւանդութիւնների բաժնի վարիչը՝ փոխգնդապետի աստիճանով։ Արժա-

նացել է պատուանշանների եւ մեծ համակրանք վայելել կառավարական շրջանակներում[118]:

Տնտեսագէտ Ջորջէ Դաւիդովիչը (George Davidovic, Գէորգ Բաղդասարի Դաւթեան) ծնուել է 1899ին, Քեմախի Բագառիճ գիւղում: Փոքր հասակում տեղափոխուել է Սերբիա՝ հօր մօտ: Ուսանել է Ժնեւի Հասարակական եւ Տնտեսագիտական Համալսարանում: Աշխատակցել է շուէյցարական մամուլին: Վերադառնալով Բելգրադ՝ աշխատակցել է տեղական եւ արտասահմանեան թերթերին, աշխատել Բելգրադի Առեւտրական Դպրոցում: 1930ին Դաւիդովիչը հիմնադրել է Բելգրադի Տնտեսագիտական Միութիւնը (1934ից եղել նրա նախագահը), 1931ին՝ La Vie Economique et Financier Հարաւսլաւիայի տնտեսագիտական Ֆրանսալեզու հանդէսը եւ նոյնի սերբերէն տարբերակը՝ Ekonomsko Finanske Zivot: 1934ին Լայպցիգի միջազգային տնտեսական ցուցահանդէսում ներկայացրել է Հարաւսլաւիան[119]: 1933-1937 նախագահել է Հարաւսլաւիայի «Արտիզինալ» ընկերութիւնը, 1937ից եղել է Հարաւսլաւիայի Միացեալ Համագործակցական Շարժում կազմակերպութեան ընդհանուր քարտուղարը: Մասնակցել է միջազգային համաժողովների Փարիզում, Լահէյում, Քեմբրիջում, Նէապոլում:

Բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ ռուսական հայազգի մտաւորականներից ոմանք յայտնուել են Հարաւսլաւիայում: Նրանցից է տնտեսագէտ, գրող, համագործակցական շարժման տեսաբան Վահան Տոտոմեանցը (1875, Աստրախան-1952, Բելգրադ), որի աշխատութիւնները լոյս են տեսել քսան լեզուներով, նաեւ՝ սերբերէն: 1934ին նա Հարաւսլաւիայում հանդէս է եկել դասախօսութիւններով, Սեպտեմբերին մասնակցել Բելգրադում կայացած հարաւսլաւական համագումարին[120]: Նա 1937ից մշտական բնակութիւն է հաստատել Բելգրադում[121]:

Ռուսաստանից արտագաղթած հայազգի ճարտարագէտ-նաւաշինարար եւ մեքենագէտ Եակով Մատուէյի Խլիտչիեւի (1886, Նոր Նախիջեւան, այժմ՝ Դոնի Ռոստովի մէջ-16.04.1963, Բելգրադ) հայկական անունն էր Յակոբ Մատթէոսի Խլրթչեան, որ գրող Մարիէտա Շահինեանի ազգականն էր: Նա մկրտուել է Նոր Նախիջեւանի հայկական եկեղեցում, 1911ին աւարտել է Պետերբուրգի Պոլիտեխնիկ Ինստիտուտի Նաւաշինական Բաժանմունքը: Նոյն թուականից աշխատել է նոյն ինստիտուտի Շինարարական Մեքենագիտութեան Ամբիոնում եւ Բալթիական Նաւաշինական Գործարանի Կոնստրուկտորական Բիւրոյում: 1918ին Խլիտչիեւը մասնակցել է Խերսոնի Պոլիտեխնիկ Ինստիտուտի կազմակերպմանը: 1920ին անցել է Կ.Պոլիս, այնտեղից՝ Բելգրադ, որտեղ աշխա-

տանքի է անցել համալսարանի տեխնիկական բաժնում (1937ից՝ ուսուցչապետ) եւ հարաւսլաւական գիտական մամուլում հանդէս է եկել յօդուածներով։ 1955ին նա ընտրուել է Գիտութիւնների եւ Արուեստի Սերբական Ակադեմիայի իսկական անդամ։ Խլիտչիեան է կազմակերպել տեսական եւ կիրառական մեքենագիտութեան առաջին երեք համագումարները Հարաւսլաւիայում։ Պարգեւատրուել է հարաւսլաւական պետական շքանշաններով[122]։

Կարճ ժամանակով Բելգրադի օպերային թատրոնի գլխաւոր բեմադրիչը եւ տնօրէնն է եղել հայազգի ռուս երգիչ (բարիտոն) եւ օպերային բեմադրիչ Միխայիլ (Միքայէլ) Կարակաշը (1887-1937)։ 1931ին հաստատուելով Բելգրադում, նա տեղի օպերայում կատարել է մի շարք բեմադրութիւններ, որոնցից նրան մեծ ճանաչում են բերել «Սեւիլեան Սափրիչը» (1934) եւ «Իշխան Իգոր»ը (1935)։ Կարակաշը մահացել է 50 տարեկանում, Բելգրադում (այլ տուեալով՝ Բուխարեստում)[123]։

1931ից ի վեր, մի քանի տարի Սկոպիէում է բնակուել բանասէր, թարգմանիչ, երաժիշտ, տնտեսական գիտութիւնների մագիստրոս Յակոբ-Գրիգորը, որը հայ-հարաւսլաւական մշակութային կապերի ամենաեռանդուն գործիչներից էր։ Թէեւ զբաղմունքով եղել է մուշտակավաճառ, սակայն նա միաժամանակ ակտիւօրէն թղթակցել է հայ եւ տեղական մամուլին (մասնաւորապէս՝ Vardarին), յետագայում հանդէս է եկել առանձին գրքերով։ Նա կազմել է սերբահորվաթերէն-հայերէն գրպանի բառարան, որը մնացել է անտիպ[124]։

1931ին Զագրէբի Առեւտրական Բարձրագոյն Ինստիտուտը դոկտորի տիտղոսով աւարտել է Տիրան Ա. Սուքիասեանը, ծնունդով Քեմախի Բագառիճ գիւղից։ Նրա դոկտորական թեզն էր «Հայկական Հարցը Մինչեւ ԺԹ. Դարի Վերջը»։ Ինստիտուտի դասախօսները բարձր են գնահատել նրա աշխատութիւնը, իսկ Զագրէբի կարեւոր թերթերն այն որակել են որպէս քաղաքագիտական յուրջ աշխատութիւն։ Այս առթիւ հայ մամուլին ուղարկած թղթակցութեան մէջ գրուել է. «Մտադրած ենք այս աշխատութիւնը տպել տալ տեղական լեզուով եւ ձրի բաժնել պետական անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ կարեւոր պաշտօնեաներու։ Թէեւ հայ գաղութը փոքրաթիւ է Եուկոսլաւիոյ մէջ, բայց սիրուած է տեղական տարրին կողմէ իբրեւ լուրջ, համեստ, գործունեայ եւ ստեղծագործող ցեղ մը»[125]։

Փարիզաբնակ լրագրող-հրապարակախօս Լեւոն Սաւաթեանը 1930ականներին ճանաչուած է եղել որպէս Հարաւսլաւիայի մեծ բարեկամ, Revue Balcanique Ֆրանսերէն հանդէսի հրատարակիչը։ Հարաւսլաւ-

իայի մասին Ֆրանսիայում նրա հրատարակած յօդուածները ամէն օր հեռախօսով կամ հեռագրով հաղորդուել են հարաւսլաւական մամուլին, մասնաւորապէս՝ Բելգրադի մեծագոյն եւ կիսապաշտօնական Vreme օրաթերթին։

Մակեդոնիայի Հանրապետութեան Գիւղատնտեսութեան փոխնախարարը որոշ ժամանակ եղել է Արթին Յովսէփեանը։ Համալսարանի ուսուցչապետ է եղել բժիշկ Լեւոն Մելքոնեանը[126]։ Հարաւսլաւական շրջանակներում ճանաչուած է եղել Տիգրան պէյ Զրաճեանը, որը Բ. Աշխարհամարտից յետոյ ընտրուել է Ազգային Պաշտպանութեան Խորհրդարանական Յանձնախմբի ատենապետ ու նաեւ՝ հայ համայնքի ներկայացուցիչը Հարաւսլաւիայի խորհրդարանում[127]։

Վրիժառու Սողոմոն Թեհլերեանը (1896-1960) Բեռլինում Թալէաթ փաշային սպանելուց յետոյ, 1921ին կնոջ՝ Անահիտի հետ հաստատուել է Բելգրադում։ Նրա զաւակները ծնուել են Բելգրադում։ Սողոմոն Թեհլերեանի որդի Շահէնը (ծն. 1925) եօթ տարեկանից դաշնամուր է նուագել, յետագայում աւարտել Բելգրադի Երաժշտական Ակադեմիան եւ դասաւանդել քաղաքի տարբեր երաժշտական դպրոցներում։ Հանդէս է եկել նաեւ որպէս մենակատար։ Երաժիշտ է եղել նաեւ նրա եղբայրը՝ Զաւէն Թեհլերեանը, որը յետագայում դարձել է Սան Ֆրանսիսկոյի Սիմֆոնիկ Նուագախմբի առաջին ջութակահարը[128]։ Թեհլերեանները բնակուել են Բելգրադի Դալմատինսկայա 11 փողոցում, մինչեւ 1951, որից յետոյ հաստատուել են Մարոկում, այնուհետեւ՝ ԱՄՆում[129]։

Հայ-հարաւսլաւական կապերի եւ ականաւոր հարաւսլաւահայերի մասին խօսելիս սխալ կը լինի չյիշատակել Մելանի Խորասանճեանին (1885-1924)։ Հայի հետ ամուսնացած եւ հայերէնին քաջահմուտ այս սերբուհին (ծնեալ Ժանիէտովիչ) լիովին նուիրուել է իր ամուսնու ժողովրդին, իր իսկ խօսքերով՝ «հերոս հայ ցեղին»։ Մեծ յարգանք վայելելով հայկական, սերբական, բելգիական, իտալական եւ ֆրանսիական շրջանակներում՝ Մելանի Խորասանճեանը Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին նուիրուել է հայ զինուորների խնամքի գործին, Լոնդոնում կազմակերպել օգնութիւն՝ յանուն հայ որբերի, եղել Հայ Տիկնանց Աշխատանոցի եռանդուն գործիչներից։ Այնուհետեւ նուիրուել է եւրոպական ժողովուրդների մէջ հայութեանը ներկայացնելու գործին՝ նպատակ ունենալով յատկապէս՝ հայ արուեստի միջոցով հային ճանաչել տալ օտարներին։ Բազմիցս հանդէս է եկել հայանպաստ բանախօսութիւններով, հայութեան շահերը ներկայացրել Ա. Աշխարհամարտից յետոյ Ժնեւի Միջազգային Համագումարում։ Մելանի Խորասանճեանի

ջանքերով է հիմնուել Բելգիայի «Արմենիա» միութիւնը։ Նա քաջալերել է հայ բեմի դերասանուհի Էլիզ Գովանին (Պիննեմէճեան) Փարիզում հայկական թատերախումբ հիմնելու։ Այս եռանդուն սերբուհու անժամանակ մահը Բրիւսէլում, 39 տարեկանում, մեծ կորուստ է եղել հայ ժողովրդի եւ յատկապէս հայ արուեստագէտների համար[130]։

ՀԱՅ-ՍԵՐԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 1910-1930ԱԿԱՆՆԵՐԻՆ

Արդէն 1911ին սերբ գրականութեան որոշ նմոյշներ հայերէն են թարգմանուել բնագրից։ Պոլսի Ազատամարտ շաբաթաթերթի յաւելուածում լոյս է տեսել Բոր. Միրկովիչի «Կեանքին Ընդմէջէն» բանաստեղծութիւնը՝ Զենոբ Սուրէնեանի թարգմանութեամբ[131]։ Վերջինս Եղեռնի գոհ բանաստեղծ Արմէն Տորեանի (Հրաչեայ Սուրէնեան) եղբայրն էր։ Սերբերէնի նրա իմացութիւնը բացատրւում է այն հանգամանքով, որ Սուրէնեան եղբայրները ծնուել են Սկոպիէում։

Փարիզաբնակ բանաստէր Մ. Ս. Դաւիթ Բէկը (Մարտիրոս Սարգսեան, 1870-1938) հրատարակել է քերականութիւններ եւ զրուցատրութիւններ տարբեր լեզուներով, նաեւ՝ սերբերէն։

Հայ-սերբական գրական կապերի մասին խօսելիս նախեւառաջ յիշւում է Յովհաննէս Թումանեանը, որը 1915ից սկսած ռուսերէնից թարգմանել է սերբական դիւցազնավէպի մի քանի չափածոյ հատուածներ՝ «Թէ Ինչ Ուղարկեց Թուրքի Սուլթանը Մոսկովի Ցարի Ընծաների Փոխարէն», «Մարկօն Ռամազանին Գինի է Խմում», «Մարկօն Վերացնում է Պսակի Հարկը» եւ «Մարկօն Վար է Անում»։ Առաջին վիպերգում, ըստ գրականագէտների, Թումանեանը տեսել է թուրքական լծից քրիստոնեայ ազգերի ազատագրման գործում Ռուսաստանի պատմական դերի հաստատումը, իսկ երկի գրաւչութիւնը հայ բանաստեղծի համար մեծացել է նրանով, որ քրիստոնեայ պատրիարքի՝ «արդար ծերունու» կերպարն իր մարդասիրութեամբ եւ անձնազոհութեամբ յիշեցնում է Թումանեանի «Աղաւնու Վանքը» ստեղծագործութեան ծերուկ հայր Օհանին[132]։ Յատկանշական է, որ Թումանեանը ծանօթագրել է որոշ անուններ, օրինակ, «Կոսովի դաշտը» նա համարել է «սերբական Աւարայրը», նմանութիւններ տեսել արքայազն Մարկոյի եւ Սասունցի Դաւթի կերպարների միջեւ[133]։ Թումանեանը 1916ին գրել է նաեւ «Մի Երկու Խօսք Սերբ Ժողովրդական Էպոսի Մասին» յօդուածը[134]։

Աւետիք Իսահակեանի «Ժողովրդի Քնարը (Սերբական Լեգենդ 18րդ Դարի)» վիպերգը մի պատկեր է՝ սերբ ժողովրդի թուրքական տիրապետութեան ժամանակաշրջանից, այն ժամանակ, երբ «Փայլատակում էր

եաթաղանը կեռ/ Արիւնաթաթախ Սերբիայի վրայ»։ Վիպերգում խընջոյք է անում «Աբդուլլահ փաշան, Սերբիայի դահիճ/ Ճերմակ Բելգրադի պերճ ապարանքում»[135]։ Նա հրամայում է իր մօտ կանչել ծեր գուսլեար Մարկոյին՝ հրամայելով իր գործիքով փառաբանել իրեն։ Դրա դիմաց փաշան խոստանում է ազատել Մարկոյի չորս գերեվարուած որդիներին։ Սակայն ծեր գուսլեարը չի կարողանում իրեն կեղծել. նա ջարդում է իր գործիքը, ասելով, որ «ժողովրդի քնարը չի կարող ստել»։

Սերբիան թռուցիկ յիշուած է Ռուբէն Սեւակի «Ճամբորդութիւն» արձակ գործում (1906), երբ երիտասարդ գրագէտը շոգեկառքով ուսման է մեկնելիս եղել Շվէյցարիա։ «Այս գիշեր ուժգին երաժշտութիւն մը կ'արթնցնէ զիս ընդոստ։ Սերպիոյ Փիրոթ կայարանին առջեւ կեցած ենք։ Ձիւնը ծածկեր էր գետինները ճերմա՜կ, ճեփ-ճերմակ։ Ձիւներուն վրայ Սերպիոյ աշխոյժ քամի մ'է որ կը պարէ զուարթօրէն. երաժիշտները իրենց ձայնին բոլոր ուժգնութեամբը կ'երգեն իրենց տոհմիկ երգերը։ Մարդ պէտք չունի անոնց լեզուն գիտնալու՝ զմայլելու համար այդ սրտայոյզ երգերէն։ Ու տխրագին աղաղակներ կը թնդան օդին մէջ, ու գեղջուկ երգեր կը ցնցեն սրտերը, ու ջութակներ կը հեծեն գիշերին մէջ.... Ու կը յառաջանանք միշտ։ ....Ու ահա՜ լոյսը, ահա՜ տունի ստուերները, ու ահա՜ կայարանն ալ։ Պելկրատ ենք»[136]։

Սերբ գրականութեան այլեւայլ նմոյշներ լոյս են տեսել նաեւ 1920ականների հայ մամուլում[137]։ 1939ին հայ մամուլում Յակոբ-Գրիգորի արձակ թարգմանութեամբ լոյս է տեսել սերբական ազգային «Դուշան Կայսեր Ամուսնութիւնն ու Մահը» դիւցազներգութիւնը։ «Հայեւսերը բարեկամութեան առաջին սանդո՛ւխը թող ըլլայ այս փորձս, որուն անշուշտ ուրիշներ պիտի յաջորդեն», գրել է թարգմանիչը[138]։ Ի դէպ, այս առթիւ Բելգրադի Vreme օրաթերթում ճանաչուած երիտասարդ հրապարակախօս Տոդոր Մանեւիչը (Todor Manević) 1935ի Օգոստոսի 11ի թւում ստորագրել է յօդուած հայ ազգի գրական կարողութիւնների մասին։ Իր խօսքը սկսելով Յակոբ-Գրիգորի՝ սերբական դիւցազներգութեան թարգմանութեան յիշատակմամբ, նա նշել է, որ հայերը շատ տարիներ առաջ թարգմանել են գրեթէ բոլոր քաղաքակիրթ ազգերի դիւցազներգութիւնները եւ Շեքսպիրի գործերը՝ յիշելով հայ թարգմանիչներ Արսէն Ղազիկեանի, Մատթէոս Մամուրեանի եւ Յովհաննէս Մասեհեանի անունները[139]։

1936ին Բելգրադում լոյս է տեսել Ֆրանց Վերֆէլի Մուսա Լերան 40 Օրերը վէպի սերբահորվաթերէն թարգմանութիւնը՝ երկու մեծ հատորով եւ «Հայերի Մեծ Վէպը» ենթախորագրով[140]։ Հարաւսլաւական մա-

մուլը, մասնաւորապէս Սկոպիէի Vardarը եւ Skopski Glasnikը (Սկոպիէի լրարեր) ջերմ տողերով ողջունել են գրքի հրատարակումը[141]: 1930ականներին Բելգրադում ելոյթ է ունեցել նշանաւոր հայ նուագածու Քեմանչիստ Ռուբէնը (Գարախանեան, 1895-1983): Ի դէպ, Ռուբէնին Բելգրադի թուրք հիւպատոսը սխալմամբ դրել է յեղափոխական գործիչ Ռուբէն Տէր Մինասեանի տեղը եւ ձերբակալել է տուել, որից նա ազատուել է Սողոմոն Թեհլերեանի եւ Բելգրադի հայոց քահանայի ջանքերի շնորհիւ[142]:

Եղել են կապեր նաեւ արուեստի ասպարէզում: Որոշ ժամանակ Բելգրադում է գործել երաժիշտ Լեւոն Եղիազարեանը (1870ականներ, Շամախի-1927, Բրաշով, Ռումինիա), գրող Կոստան Զարեանի համահայր եղբայրը: 1925ի Փետրուարի 9ին Բելգրադի թատրոններից մէկում նրա ղեկավարութեամբ կայացել է տեղի Ստանկովիչ երգչախմբի համերգը: Բացառապէս սերբերից կազմուած այս երգչախմբին հայ երաժիշտն ուսուցանել է հայ ժողովրդական երգեր, եւ խումբը յաջողութեամբ կատարել է «Իմ Զինարի Եարը», «Կռունկ», «Ինջելիք» եւ այլ երգեր, որոնք մեծ հետաքրքրութիւն են առաջացրել: Արտասանուել են Արշակ Չօպանեանի La Roseraie d'Armenie ժողովածուի բանաստեղծութիւններից՝ սերբերէն թարգմանութեամբ[143]: Երեկոյթին մասնակցել են Սերբիայի լաւագոյն դերասաններ, ինչպէս նաեւ հայ երգչուհի Բորովեանը, որ կատարել է «Անտունի», «Երազ» եւ «Արի իմ Սոխակ» երգերը: Համերգից յետոյ Սերբիայի խորհրդարանի նախագահ Լուբա Իւանովիչը եւ իր տիկինը իրենց օթեակն են հրաւիրել Եղիազարեանին եւ շնորհակալութիւն յայտնել համերգի համար[144]: Այս համերգին, սակայն, անդրադարձել է ընդամէնը մէկ սերբական թերթ[145]:

1935ին Սկոպիէի պետական թատրոնում կայացել է քաղաքի երաժշտական վարժարանի ուսանող, «Վարդար» մեծ երգչախմբի անդամ Յարութիւն Ղազարոսի Սիւրմէեանի (բանասէր, հոգեւորական Արտաւազդ Սիւրմէեանի եղբօրորդին) մենահամերգը, որի ընթացքում նա հանդէս է եկել հայկական եւ հարաւսլաւական երգերի կատարումներով[146]: 1937ին, նա մեծ յաջողութեամբ հանդէս է եկել Մասկանիի «Գեղջկական Ասպետութիւն» օպերայի բեմադրութեան մէջ: Բ. Աշխարհամարտից յետոյ Սիւրմէեանը երկար տարիներ եղել է Սկոպիէի Մակեդոնական Ազգային Օպերայի մենակատար, հանդէս եկել դասական եւ հարաւսլաւական երկու տասնեակի հասնող օպերային բեմադրութիւններում՝ մեծ յաջողութիւններ արձանագրելով Հարաւսլաւիայի քաղաք-

ներում[147]: Նա մեծապէս նպաստել է մակեդոնական երաժշտական մշակոյթի զարգացմանը:

Հարաւսլաւիայի հայ երաժիշտներից են նաեւ 1935ից Բելգրադում բնակուած դաշնակահարուհի Ովսաննա Տէրտէրեանը (ծն. 1912, Քեմախ), ինչպէս նաեւ 1932ին Բելգրադում ծնուած դաշնակահարուհի Էլիցա Բաղդասարեանը եւ 1937ին Սուբոտիցայում ծնուած երգչուհի Ալմաստ Պետրոսեանը[148]:

Դերասան Վահրամ Փափազեանի վկայութեամբ՝ մինչեւ Ա. Համաշխարհային Պատերազմը Կ.Պոլիս է եկել բոսնիացի մեծահարուստ Ռիզա Ռուհին Սարայեւոյից: Նա կազմակերպել է հայկական ուժերով Շեքսպիրի Համլէտի բեմադրութիւնը եւ ֆինանսաւորել ամբողջ գործը: Ներկայացման բեմադրիչը եղել է Վահրամ Փափազեանը: Ռիզա Ռուհին ներկայացումից մէկ ժամ առաջ յայտարարել է, որ ինքը պէտք է մայրենի լեզուով խաղայ Կլաւդիոսի դերը, որը ո՛չ երբեւէ փորձել էր, ո՛չ էլ տեքստին էր ծանօթ: Հայ դերասանները չեն ցանկացել մերժել իրենց երկու ամիս հովանաւորած առատաձեռն օտարերկրացուն: Սակայն Փափազեանի հօրաքոյրը, որը նոյն ներկայացման մէջ Գերտրուդի դերակատարուհին էր, փրկել է դրութիւնը: Նա «այդ գիշեր խաղաց թագաւորն ու թագուհին «մի մարմին դարձած», թոյլ չտալով խելագար բոսնիացուն որպէս նմոյշ արտասանել գոնէ մի վանկ խորվաթական դպրութիւնից: Այդ ներկայացումից քիչ յետոյ Ռիզա Ռուհին հեռացաւ մեզանից Սարայեւо, իր ծննդավայրը, տանելով իր հետ իբր ամուսին մի սիրուն աղջկայ, սկիւտարցի մի համեստ հայ ընտանիքից, օրիորդ Բլոնդին անունով, անբաւ հարստութիւն թողնելով մեր թատրոնին եւ մի թանկագին մատանի՝ ինձ, որպէս յիշատակ»[149]: Տեղին է նշել, որ իր Ցեռադարձ Հայրենիք յուշագրութեան վերջում իր այցելած քաղաքները թուարկելիս Փափազեանը յիշել է նաեւ երեք հարաւսլաւական քաղաք՝ Նիշ, Բելգրադ եւ Զագրէբ[150]:

Դարձեալ Յակոբ-Գրիգորի վկայութեամբ՝ 1936ին Հարաւսլաւիայում մեծ յաջողութիւն է ունեցել հայ անդրանիկ հնչուն շարժանկարը՝ Համօ Բեկնազարեանի «Պեպо»ն: «Մեր քաղաքին մէջ չգիտցող չմնաց: Թերթերը օրեր առաջ իրենց սիւնակներուն մէջ այս չորս գիրերը տարածեցին, եւ ժողովուրդը յուսախաբ չեղաւ: Գնա՜ց, գնաց բազմութիւնով, եւ լսեց իրեն համար նոր լեզու մը, ոսկեղէն լեզու մը: Ինչպէս իմացայ, Սլովենիոյ քաղաքակիրթ մայրաքաղաքին՝ Լուբիանայի մէջ, ՊԵՊՕն տարեր է ողիմպիական յաղթանակ մը: Եւ ֆիլմը «վազեր» է այդ քաղաքի թատրոններուն մէջ՝ ա՜յնքան երկար, որ մենք ստիպ-

ռած պիտի կոչենք այդ՝ «Պեպոյի մարաթոնեան վազքը Լոբիանայի մէջ»[151]։

Ամփոփելով կարող ենք նշել, որ հայ-հարաւսլաւական կապերը, թէ եւ սակաւ եւ պատահական, ինքնին ուշագրաւ են՝ հանդիսանալով Եւրոպայում հայոց ներկայութեան խճանկարի մի գոյներ։ Հարաւսլաւիայի հայութիւնը եղել է Բալկանեան թերակղզու տիպար պապուք, որն իր սակաւութեան եւ ազգային կեանքի անկազմակերպութեան պատճառով դատապարտուած էր եղել արագ ձուլման եւ անհետացման[152], թէեւ ոչ սօր էլ հարաւսլաւահայերից շատերի մէջ վառ է մնում ազգային ոգին եւ համախմբուելու ջանքեր են գործադրւում։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Այս երկրի անունը Ի. դարի արեւմտահայ մամուլում տրուել է Թարգմանարար Սեւ-Լեռ կամ Սեւ-Լեռնեան կառավարութիւն անուններով («Պետական կեանք», Զմիւռնիա, 18-06-1-07-1911)։*

[2] *Անգամ մեր օրերում գուգահեռներ են անցկացւում Ղարաբագի եւ Կոսովոյի հիմնախնդիրների միջեւ (Ստեփան Պողոսեան, «Սերբիա եւ Հայաստան, Կոսովո եւ Արցախ», Ցառաջ, 7/8-07-2007)։*

[3] *Մինչեւ անգամ յայտնի են դէպքեր, երբ հայերին եւ սերբերին թիւրիմացաբար նոյնացրել են։ Այսպէս, երբ 1917ին Մարսէյում նշել են Մառնի ճակատամարտի հրաբոց տարելիցը, հանդիսութեան ժամանակ հայերին սխալմամբ սերբ են կոչել։ Այս տոթիս ժամանակակիցը գրել է. «Ֆրանսան աշխարհի յառաջադէմ ազգերէն ըլլալով հոն, դեռ հասարակ ժողովուրդը բոլորովին ոգեւոր եւ անձնանոր է հայերու ու հայաստանին, անոնք կը շփոթեն մեզ յաճախ Սերպերու եւ Սիրիացիներու հետ (Աբրօ, «Մառնի Յաղթական Ճակատամարտի Յրդ Տարեդարձը եւ Մ. Հ. Ե. Միութիւնը», Վերածնունդ, 17-10-1917, էջ 120)։*

[4] Hagop-Krikor, *Les Arméniens Connus et Inconnus*, Փարիզ, 1974, էջ 196-197, հմմտ՝ Յակոբ-Գրիգոր, *Երկերու Հաւաքածոյ*, Փարիզ, 1981, էջ 306-324։

[5] *Հայ-սերբական առնչութիւնների վերաբերեալ նրա յոգուածները տե՛ս՝ նրա հայերէն սերբերէն մատենագիտութեան մէջ (Բարկէն Միմոնեան. Մատենագիտութիւն, Երեւան, «Գիրք» Հրատարակչութիւն, 2002)։*

[6] *Վ. Գ., «Հաւերը» Գրքի Շնորհանդէսը Պելգրատում», Մկիտար Ռուսաստան-Մարտ, 2008, թ. 1-3, էջ 8։*

[7] *Հրաչեայ Աճառեան, Հայ Գաղթականութեան Պատմութիւն, Երեւան, «Գանձասար», 2002, էջ 680, հմմտ՝ Աշոտ Յովսեփեան, «Հարաւսլաւիա», գրաբար գրականութիւն, Երեւան, «Հայկական Հանրագիտարան» Հրատարակչութիւն, 2003, էջ 300-301։ Ա. Յ. Մակարեանի Յուշագիրք Թրակիայ եւ Մակեդոնիայ գրաբար գրականութեան մասին հատորը (Մեքենիկ, «Հարիսպոնա», 1929) վերաբերւում է յունական Մակեդոնիային։ Հայ-հարաւսլաւական կապերին անդրադարձել է նաեւ Երուսաղէմի Յիսուսեանը՝ ուսումնասիրելով Բրուսանացի սիրելի գրաքննիչ Մեսրոպ Ալիշանի Հայ-Սլաւոնական Բնիկ Բարեկամութիւն Հատորում (Երեւան, Սովետական գրականութիւն, 1988, էջ 228-230)։*

[8] *Մենք կը փորձենք կատարել առաջին գործնական քայլը սոյն թեմայի ակադեմիական ուսումնասիրութեան մէջ՝ նրա ամենալայն ընդգրկմամբ հետազօտումը թողնելով նախկին Հարաւսլաւիայի ժողովուրդների լեզուների գիտակ մի մասնագէտի, որը հնարաւորութիւն կ՝ունենայ պրպտումներ կատարել հարաւսլաւական, ինչպէս նաեւ եւրոպական այլ երկրների դիւաններում (մասնաւորապէս՝ Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան արխիւներում, որտեղ արժէքաւոր նիւթեր կան յատկապէս Սերբիայի հայութեան վերաբերեալ)։*

[9] *Ցակոբ-Գրիգոր, «Սերպ Մամուլը եւ Հայերը», Ապագայ*, 12.03.1935։

[10] *Սուրէն, «Սերպահայ կեանքէն», Ապագայ*, 14.04.1925։

[11] *Ցակոբ-Գրիգորը, առանց որեւէ պատմական սկզբնաղբիւրի վկայակոչման, որպէս հայտնի է յիշել ԺԴ.-ԺԵ. դարերում գործած Սերբիայի առաջին եպիսկոպոս Ցամբլակին* (Tzamblak) (Hagop-Krikor, *Les Arméniens*, էջ 106)։ «...Թուրքին դէմ կռուելու հասարակաց բաղաքականութիւնը Պալքանեան թերակղզին նետած է շարք մը Հայեր, որոնք ճակատագրական դեր խաղացած են Եւրոպայի այս մասին մէջ ալ։ Ամենէն շատ կարեւորութիւն ստացած Հայը եղած է Զանպակ կամ Ցանպակ արքեպիսկոպոսը, որ ո՛չ միայն եղած է Սերպերու առաջին պատրիարքը, այլ նաեւ նախկին Բեթրոկրատի ալ առաջնորդ՝ Ռուսերու համար։ Ատկէ զատ Զանպակ իր պատուոյ տեղն ունի եուկօսլաւ գրականութեան մէջ» (*Ցակոբ-Գրիգոր, «Հայ-Եուկոսլաւ Ցարաբերութիւններ», Հայաստանի Կոչնակ*, 26.09.1935, էջ 928)։ *Սա բացարձակ սխալ է, քանի որ այդ գործիչը ապրել է ԺԴ.-ԺԵ. դարերում, իսկ Պետրոգրադը հիմնուել է ԺԸ. դարում։ Գրիգորի Ցամբլակը* (1364-1420) *որոշակի դեր է կատարել Ռուսիայի, Սերբիայի, Մոլդաւիայի եւ Լիտուայի հոգեւոր կեանքում։ Նա կրթութիւն ստացել է Բիւզանդիայում՝ Աթոնի վանքում, աշակերտել նշանաւոր բիւզանդացի աստուածաբանների եւ գիտնականների եւ ազդութեամբ եղել է սերբ։*

[12] O. Kh. Khalpakhchyan, *K Voprosu ob Armiano-Serbskikh Kulturnikh Sviazakh* (*Հայ-սերբական մշակութային կապերի հարցի շուրջ*), *Պատմաբանասիրական Հանդէս*, 1971, թ. 2, էջ 259-262, նաեւ՝ *Հ. Մ. Բարթիկեան, «Հայերէն Երկու Վիմագիր Արձանագրութիւն Հարաւսլաւիայում», Պատմաբանասիրական Հանդէս*, 1990, թ. 3, էջ 127-130։

[13] *Բարթիկեան*, էջ 130։

[14] http://en.wikipedia.org/wiki/Jermenovci։ *Ըստ այս նոյն աղբիւրի՝ 2002ին այս գիւղն ունեցել է 1033 բնակիչ, մեծ մասամբ հունգարացիներ։ Ցակոբ-Գրիգորն այդ գիւղը յիշել է Վրշաց քաղաքի մօտ՝ Արմենովաց կամ Էրմենովաց անունով* (Hagop-Krikor, *Les Arméniens*, էջ 107)։ *Այս բնակավայրի մասին մանրամասն տես՝* Bodog Milleker, *Örményháza Története, 1817-1906* (*Արմենովացի պատմութիւնը*, 1817-1906), 1906 Vrsac։

[15] *Պ. Մ., «Օտար կարծիքներ Հայ Արուեստին մասին», Նաւասարդ, Բ. շրջան, Պուքրէշ*, 1925, էջ 168։

[16] Armand Thouhadjian, *Saint Blaise Evêque de Sébaste, Arménie Mineure, Saint du IVe Siècle Universel et Populaire*, Paris, L'Harmattan, 2004, էջ 259-263։ *Ֆրանսահայ հեղինակը մանրակրկիտ հետազօտել է Վլասի մասին, սակայն նրան անմատչելի են եղել այս սրբի վերաբերեալ հայերէն աղբիւրները (օրինակ, Մ. Աւգերեան, Մաղիկ Վարուց Սրբոց, Զորս կը Տօնէ Եկեղեցի Հայաստանեայց, Վենետիկ*, 1803, *նաեւ՝ Կ. Ց. Բասմաջեան, «Սուրբ Վլաս կամ Վլաւա», Հայաստանի Կոչնակ*, 1932, թ. 42, էջ 1054-1055)։

[17] Thouhadjian, էջ 355, 363։

[18] G. L. Karagezyan, *Armenia i Armyane vo Francuzskoy Literature XI-XIV vekov* (*Հայաստանը եւ հայերը ԺԱ.-ԺԴ. դարերի ֆրանսիական գրականութեան մէջ*), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1988, էջ 27.

[19] *Գրիգոր Տղայ, Բանաստեղծութիւններ եւ Պոէմներ*, աշխատասիրութեամբ *Ասատուր Մնացականեանի*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1972, էջ 268.

[20] *Բարկէն Սիմոնեան*, «*Հայկական Նորայայտ Ցուշարձան Սերբիայում. Երմենիլ*», *Ազգ*, 23.07.1992.

[21] *Ցովակիմեան*, «*Հարաւսլաւիա*», էջ 353.

[22] Vahan Totomianz, *Le Rôle des Arméniens dans la Civilisation Mondiale*, Belgrade, 1938, էջ 59.

[23] *Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ*, հրատարակեց *Մեսրոպ Վրդ. Նշանեան*, *Տպարան Առաք. Աթոռոյ Ս. Յակոբեանց*, Երուսաղէմ, 1915, էջ 18.

[24] *Նոյն*, էջ 69.

[25] *Ցովակիմեան*, «*Հարաւսլաւիա*», էջ 355.

[26] *Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Արշակ Մաղոյեանի*, Երեւան, «*Նայիրի*» *Հրատարակչութիւն*, 1997, էջ 40.

[27] *Նոյն*, էջ 41.

[28] *Ուշ Միջնադարի Հայ Բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)*, *Հտ. 2*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1987, էջ 311.

[29] *Հրաչեայ Աճառեան, Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Թաւրիզի*, Վիեննա, *Մխիթարեան*, 1910, էջ 115.

[30] *Մաղր Ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ.*, *Հտ. 1*, *կազմեց Վազգէն Յակոբեան*, Երեւան, *Հայկ. ԽՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն*, 1956, էջ 283.

[31] *Յակոբոս Տաշեան, Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Կայսերական Մատենադարանին ի Վիեննա*, Վիեննա, *Մխիթարեան*, 1891, էջ 31, *նաեւ՝ Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց*, Գահիրէ, «*Նոր Աստղ*», 1952, էջ 1059, *նաեւ՝ Մաղր Ժամանակագրութիւններ*, էջ 404.

[32] *Տաշեան, նաեւ՝ Մաղր Ժամանակագրութիւններ*, էջ 405.

[33] *Տաշեան, նաեւ՝ Մաղր Ժամանակագրութիւններ*, էջ 405-406.

[34] *Ցուցակ Ձեռագրաց որ ի Հանդէս Ամսօրեայ*, *խմբ. Հ. Հ. Ոսկեան*, Վիեննա, *Տպ. Մխիթարեան*, 1976, էջ 40.

[35] *Ալպօյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ*, էջ 339.

[36] Sirarpie Der Nersessian, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, 1973, էջ 91. *Հետաքրքիր է, որ Սիրարփի Տէր-Ներսէսեանը յիշատակարանի անգլերէն թարգմանութեան մէջ այնպէս է գրել, որ կարծես «Երէց» եղել է գրչի անունը* ("...written by the hand of Erets of Peligrat (Belgrade?), at Constantinople in the year of the Armenians 1127 (AD 1678)," *Նոյն տեղում*, էջ 76), *մինչ բնագրից պարզ է, որ գրիչը եղել է երէց Յակոբը։ Ինչպէս տեսնում ենք, Տէր-Ներսէսեանը նաեւ վստահ չէ, թէ յիշատակարանում նշուած Պելիգրատը նոյն Բելգրադն է, ինչը, սակայն, կասկածից վեր է։ Ի դէպ, տեղանունների ցանկում ո՛չ* Peligrat *եւ ո՛չ էլ* Belgrade *կայ։*

[37] Ewa Balicka-Witakowska, "En Armenisk Magisk Rulle i Uppsala Universitetsbibliotek" (*Մի հայկական համայիլ Ուփսալայի Համալսարանի գրադարանում*), *Bysantiska Sälskapet Bulletin*, Uppsala, 1997, no 15, էջ 31-32.

[38] *Բարկէն Սիմոնեան, «Բելգրադի Հայկական Արձանագրութիւնները», Առեբեռում,* 1997, *թ.* 19։

[39] *Նոյն։*

[40] *Նոյն։*

[41] *Ալպօյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ, էջ* 339։

[42] *Հայ Սփիւռք Հանրագիտարան, էջ* 355։

[43] *«Եուկոսլաւիոյ Հայ Եկեղեցին Պիտի Փլցուի», Ասպարէզ,* 8.05.1964։ *Այստեղ նշուած է, որ եկեղեցուն կից գերեզմանատանը կայ ընդամէնը մէկ հայի շիրիմ՝ եկեղեցին կառուցողին (նկատի ունի Ճանազիզեան գերդաստանի մահարձանը)։ Հետաքրքիր եւ ցաւալի զուգադիպութիւն է, որ Ի. դարի 60ականներին հայ եկեղեցական շինութիւններ են քանդուել աշխարհի տարբեր երկրներում. 1962ին՝ Ջակարտայում (Ինդոնեզիա), 1964ին՝ Նովի Սադում (Հարաւսլաւիա), 1966ին՝ Խարբինում (Չինաստան)։ Վերջին երկու իրողութիւնները կապւում են այդ երկրներում հաստատուած համաշնավարական կարգերի ունեցած հակաեկեղեցական քաղաքականութեան հետ։*

[44] *Ալպօյաճեան, Պատմութիւն Եւդոկիոյ, էջ* 354-355։

[45] http://en.wikipedia.org/wiki/Novi_Sad

[46] *Հայ Սփիւռք Հանրագիտարան, էջ* 355։

[47] *Յովակիմեան, «Հարաւսլաւիա», էջ* 354։

[48] Tódor-Munkája Avramowics, *Njemeckij i Szerbszkij Slovari* (*Գերմաներէն եւ սերբերէն բառարաններ*), Bécs, 1790։

[49] *Յովհաննէս Կամենացի, Պատմութիւն Պատերազմին Խոթինու, աշխատասիրութեամբ Յ. Ս. Անասեանի, Երեւան, Հայկ. ԽՍՌ Գիտութիւնների Ակադեմիա,* 1964, *էջ* 59, 62։ *Ժամանակակից հայ հեղինակի գնահատմամբ,* «Օսմանեան բարիքներէն» մին ալ եղած է բնակչութեան մէկ մասի բռնի իսլամացումը. եղած են նաեւ կամաւոր կրօնափոխութիւններ, բանի Օսմանեան Կայսրութեան մէջ Մարգարէին հաւատացողը - ինչ ազգութեան ալ պատկանէր - մաս կը կազմէր արտօնեալ խաւին, մինչ կեաւուր մնացածը ենթակայ էր ամէն նուաստացումի... Այսպէս ստեղծուեցաւ Պոսնիաք կամ Պոշնաք «ազգութիւնը» ethnieն, որը մինչեւ օրս կը թունաւորէ շրջանի խաղաղութիւնն ու անդորրը» (*Ստեփան Պօղոսեան, «Սերպիա եւ Հայաստան»*)։ *Այս «թունաւորել» բնորոշումը վերաբերում է ոչ միայն տարածաշրջանում 1990ականների խժդժութիւններին, այլ նաեւ աւելի վաղ իրադարձութիւններին, օրինակ, յայտնի «Սարայեւոյի սպանութեանը», երբ 1914ին Սարայեւոյում աւստրիացի էրցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդի սպանութիւնը առիթ հանդիսացաւ Ա. Աշխարհամարտին։ Ի դէպ, Հայկական Սովետական Հանրագիտարանում Բոսնիա-Հերցեգովինայի բնակիչները նշուած չեն որպէս բոսնիացիներ, այլ՝ «սլաւոն-մուսուլմաններ»* (*Հտոր.* 2, *Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն,* 1976, *էջ* 521)։

[50] *Աշոտ Յովակիմեան, «Վուկ Կարաջիչը եւ Հայերը. Վուկ Ստեֆանովիչ Կարաջիչի 200ամեակը», Կուլտուր-Լուսաւորչական Աշխատանք,* 1988, *թ.* 3-4, *էջ* 72-79։

[51] *Նոյն, էջ* 73։ *Կարաջիչի մասին տե՛ս նաեւ՝ Արեւելքցի, «Վեթերանի մը Տան Բացումը», Արեւելք,* 7.12.1933։

[52] Hagop-Krikor, *Les Arméniens, էջ* 106։

[53] http://en.wikipedia.org/wiki/Petar_II_Petrovi%C4%87-Njego%C5%A1

[54] Hagop-Krikor, *Les Arméniens, էջ* 106։

[55] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Ֆելիքս Մովսիսեան, Եւրոպական Ազգային-Ազատագրական Շարժումները Հայ Պարբերական Մամուլում, 1848-1852, Երեւան, «Վան Արեան», 2004, էջ 612-627։

[56] «Արտաքին Տեսութիւն. Սլավոնական Երկիրներ. Բոսնիա», Արծագանք, 27.06.1882, էջ 299։

[57] Ջիւանու Քնարը, կազմեց Աղասի Սահակեանը, Երեւան, «Հայպետհրատ», 1958, էջ 770-771։

[58] Ե. Պատկանեան, «Հայերը Սերբիայում», Լոյս Օրացոյց, Նոր Նախիջեւան, 1905, էջ 171-172։

[59] Յովակիմեան, «Հարաւսլաւիա», էջ 355։

[60] Աճառեան, Հայ Գաղթականութեան Պատմութիւն, էջ 680։

[61] Վարդգէս Վ. Սայրասուր, «Հին Յիշատակներէս», Պայքար, 16.03.1927։

[62] Արիս Ֆեսճեան, «Իմ Յիշատակներէս», Արագ, 14.12.1935։

[63] Մ. Կ. Փափազեան, «Սերպերուն Դատը», Հայաստանի Կոչնակ, 1912, էջ 1123-1125։

[64] Յակոբ-Գրիգոր, «Մուսա-Դաղ»ի Յաղթանակը Եուգոսլաւիոյ մէջ», Արամազդ, 18.03.1936։

[65] Յակոբ-Գրիգոր, Երկերու Հաւաքածոյ, էջ 101։

[66] Շ., «Հերոս Հայ Դեր-գնդապետ մը Քոլերայէ Մեռած», Հորիզոն, 22.09.1913։

[67] «Հայ Գերիները Սերպիսի (sic) մէջ», Արմենիա, 18.12.1919։

[68] «Հայ Գերիները Սերպիայում», Արմենիա, 31.03.1920։

[69] «Պելկրատի Հայ Հիւպատոսը», Արմենիա, 22.09.1920, նաեւ՝ «Թող Օրինակ Ըլլայ», Մարմարա, 22.05.1925։

[70] «Հայերը Սերպիայի մէջ», Վերջին Լուր, 19.07.1919։

[71] Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, University of California Press, 1996, էջ 399-400։

[72] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), Պֆոնդ 200, ցուցակ 1, գործ 629։

[73] ՀԱԱ, Պֆոնդ 430, ցուցակ 1, գործ 441։

[74] Արշաւ, «Հրաշափառ Տեսարանը», Երիտասարդ Հայաստան, 22.06.1918։

[75] 1977ին գրուած անստորագիր «Հայերը Հարաւսլաւիայում» յօդուածում, որ պահպանւում է Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Արխիւում («Հայերը Հարաւսլաւիայում», ՀԱԱ, Ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 125) նշուած է, թէ Սերբիան միակ երկիրն էր, որ Ա. աշխարհամարտից յետոյ իր գոնները փակել է հայ գաղթականների առաջ՝ պատճառաբանելով, թէ մեծ թուով (մօտ 40 հազար) ռուս գաղթականներ է ընդունել։ Այս տեղեկութիւնը, ինչպէս տեսնում ենք, չի համապատասխանում իրականութեանը։

[76] Այսպէս, 1922ի Յունուարի 2ին Էստոնիայի Ուալք քաղաքի 30ամեայ բնակիչ, Խարկովի Համալսարանի շրջանաւարտ, ռազմական բժիշկ, ծնունդով շուշեցի Վռամշապուհ Աթալեանցը անգլերէն խնդրագիր է յղել Պօղոս Նուպարի ղեկավարած Հայ Ազգային Պատուիրակութեանը՝ յայտնելով, որ գտնւում է նիւթական նեղ վիճակում եւ փափագում է Բալկաններ տեղափոխուել եւ խնդրում է իրեն Հարաւսլաւիայի կամ Չեխոսլովակիայի մուտքի արտօնագիր տալ (ՀԱԱ, Պֆոնդ 430, ցուցակ 1, գործ 1411)։ Վռամշապուհին յաջողուել է ուկրաինուհի կնոջ եւ զաւակի հետ հաստատուել Բելգրադում։ 1991ին Հայաստանի ռադիոյին տուած հարցազրոյցում նրա դուստրը՝ Միլիցա Աթալեանցը, մանրամասն պատմել է հօր մասին, նշել, որ իր եւ եղբօր հայկական ինքնու-

թեան պահպանման գործում մեծ դեր է ունեցել նաեւ ուկրաինուհի մայրը։ Ի դէպ, Վռամշապուհ Աթալեանցի թոռնուհիներն են Բելգրադի օպերայի եւ բալէտի թատրոնի պարուհիներ Աշխէն եւ Դանուսիա Աթալեանցները։ (Աշխէն Աթալեանցի մասին տե՛ս՝ «Սերբահայ Պարուհին», Գարուն, 1999, թ. 1, էջ 89)։

77 Բարկէն Սիմոնեան, «Սողոմոն Թեհլիրեանի Որդին եւ Ուրիշները», Վերածնուած Հայաստան, 1990, թ. 5, էջ 14։

78 «Հայերը Հարաւսլաւիայում»։

79 «Հայ Ճարտարարուեստը ի Սերպիա», Արեւ, 5-11-1924։

80 «Հայ Գործագործներ Սերպիոյ մէջ», Արեւ, 17-12-1924։

81 Քեմախցի մը, «Քեմախի Հայերը Սերպիոյ մէջ», Մարմարա, 13-03-1925։

82 «Հայերը Հարաւսլաւիայում»։

83 Սիմոնեան, «Սողոմոն Թեհլիրեանի», էջ 15, նաեւ՝ «Խճանկար», Գարուն, 1999, թ. 1, էջ 88։

84 «Եուկոսլաւիոյ Հայերը», Հայրենիք, 5-08-1936։ Ըստ «Հայերը Հարաւսլաւիայում» յօդուածի՝ հանգանակուել է 150 հազար դինար, ինչը, թերեւս, չափազանցութիւն է։

85 «Պելկրատի Հայ Գաղութը», Արեւելք, 26-11-1933, նոյնը՝ "Armenians in Belgrade", *Hairenik Weekly*, 14-01-1934.

86 Վ. Ս., «Երեսի վրայ Զգուած Հայ Գաղութ մը», Ցառաջ, 11-11-1933։

87 «Եուկոսլաւիոյ Հայ Միութիւնը», Հայրենիք, 17-03-1937։

88 Հ. Գ. Մենեւիշեան, «Հարաւային Սերպիոյ Հայ Գաղութը Փճացման Ենթակայ», Ցառաջ, 7-02-1933։

89 Այսօր յանիրաւի մոռացուած Ստեփան Դաւիթեանը (ծն. 1830ին, Կեսարիայի Կերմիր գիւղում, մահացած 1890ին, Կեսարիայում, այլ տուեալով՝ Փարիզում) ժամանակի ամենահետաքրքրական հայ անձնաւորութիւններից էր, բժիշկ եւ լեզուաբան։ Նա լեհ գիտնական Զամենհոֆի ստեղծած էսպերանտոյից առաջ Կ.Պոլսի կայսերական բժշկական դպրոցի դասախօսներին ներկայացրել է համընդհանուր լեզուի իր գաղափարը։ Այն հիմնել է գրաբարի՝ որպէս կատարեալ լեզուի վրայ։ 1887ին այդ մասին լոյս է ընծայել մի ֆրանսերէն ուսումնասիրութիւն՝ ներկայացնելով Փարիզի ակադեմիային։ Նրա ֆրանսերէն աշխատութիւնները 1978ին վերահրատարակել է Յակոբ-Գրիգորը՝ իր առաջաբանով (ի դէպ, վերջինս Սկոպիէում ամուսնացել է Դաւիթեանի թոռնուհու՝ Հերմին Դաւիթեանի հետ)։ Նրա մասին մանրամասն տե՛ս՝ Յակոբ-Գրիգոր, Երկերու Հաւաքածոյ, էջ 201-217։ Կարապետ Դաւիթեանի որդու՝ Տիգրանի կինը, Սկոպիէում ծնուած հայուհի Արաքսի Դաւիթեանը հետեւեալն է պատմել սկեսրոջ մասին. «...արտակարգ ու ճանաչուած մարդ մըն էր, չքաւորներուն ձրի կը բուժէր, ատոր համար էլ Մակեդոնիոյ մէջ անոր շատ կը սիրէին։ Դոկտոր Կարապետի գաւակները Վենետիկ Մխիթարեաններու մօտ ուսանած են» (Սիմոնեան, «Սողոմոն Թեհլիրեանի», էջ 19)։ Ի դէպ, այս Կարապետ Դաւիթեանի թոռը՝ նոյնպէս Կարապետ Դաւիթեան (Garabet Tavitjan), մակեդոնական ջազային երաժշտութեան ճանաչուած դէմքերից է (յաճախ ելոյթներ է ունենում եղբայրների՝ Տիրանի եւ Կարոյի հետ)։

90 Մենեւիշեան, «Հարաւային Սերպիոյ», Ցառաջ, 7-02-1933։

91 «Զեռնարկ մը Սկիւպի մէջ», Հայրենիք, 27-05-1924։

92 «Հայ Գաղթականութիւնը Մակեդոնիոյ մէջ», Մարմարա, 12-09-1925։

93 «Հայ մը Սպաննուած Սարայէվոյի մէջ», Հայրենիք, 9-02-1929։

94 «Սերպիոյ Հանգանակութիւնը», Ցառաջ, 12-02-1927։

[95] Մենեւիշեան, «Հարաւային Սերպիոյ», 4.02.1933։
[96] Նոյն։
[97] Մենեւիշեան, «Հարաւային Սերպիոյ», 7.02.1933։
[98] «Անհետացած Գաղութը»։
[99] Յակոբ-Գրիգոր, «Ի՞նչպէս կը Մեռնինք», Հայաստանի Կոչնակ, 15.06.1935, էջ 589։
[100] Յակոբ-Գրիգոր, «Սերպ Մամուլը եւ Հայերը»։ Սակայն նոյն թուականին հրատարակուած իր մէկ այլ յօդուածում նոյն հեղինակը հարաւսլաւահայութեան թիւը նշել է «մօտ հազար» (Յակոբ-Գրիգոր, «Ուրիշ Եուգոսլաւ Հրապարակագիր մը Հայերու մասին», Պայքար, 5.09.1935)։ 1935ին սփիւռքահայ մամուլում հրատարակուած հայերի թուաքանակի վերաբերեալ մի հաղորդագրութեան մէջ նշուած է, որ Հարաւսլաւիայում եւ Չեխոսլովակիայում բնակւում է ընդամէնը 600 հայ, ինչը աւելի հաւանական է («Արտասահմանի եւ Հայաստանի Հայերի Թիւը», Ալիք, 7.03.1935)։
[101] Այն, որ հայերը անծանօթ տարր չեն եղել Ի. դարի Ա. կէսի Հարաւսլաւիայի բնակիչների համար, կարող է վկայել թէկուզ հետեւեալ փաստը։ Նոբելեան մրցանակի դափնեկիր սերբ գրող Իւս Անդրիչը վկայել է, թէ ինչպէս 1941ին ձերբակալուել է գերմանացի նացիստների կողմից եւ մնացել մի նկուղում։ Ֆաշիստ մի սպայ սկսել է ապտակել բանտարկեալներից մէկին, որն էլ փոխադարձել է ապտակները։ Անդրիչը մտածել է, որ այդ խիզախ գերին անպայման հայ պէտք է լինի։ Երկու օր անց այդ բանտարկեալը հրապարակաւ կացնահարուել է։ Անդրիչն իմացել է, որ նա իսկապէս հայ է եղել (Գէորգ Տարօնի, «Գրականութեան Նոպէլեան Մրցանակակիր Իւս Անդրիչ եւ Հայ Յեղափոխականը», Քահանայ, 27.02.1969)։ Հայերին ճանաչելու եւս մէկ փաստ է նոյն Անդրիչի «Սատանայի Պոչը» ստեղծագործութեան մէջ հայ հերոսների հանդէս գալը։
[102] «Եուկո-Սլաւիո (sic) Հայերը», Լրաբեր, 18.04.1939։
[103] Յակոբ-Գրիգոր, «Եուգոսլաւ Մամուլը Հայերու մասին», Արամազդ, 25.05.1935։
[104] Յակոբ-Գրիգոր, «Սերպ Մամուլը եւ Հայերը», նաեւ՝ նոյն հեղինակի՝ «Եուկոսլաւ Հրապարակագիր մը Հայերու մասին», Ապագայ, 17.04.1935։
[105] «Եուկո-Սլաւիոյ Հայերը», Արագ, 2.07.1936։
[106] «Պուլկարիոյ Հայոց Առաջնորդարանին Հոգեւոր Պատուիրակը Եուկոսլաւիոյ մէջ», Նոր Լուր, 3.06.1936, նաեւ՝ «Հայերը Եուկո-Սլաւիաւիոյ մէջ», Նոր լուր, 16.06.1936, նաեւ՝ Թղթակից, «Փոխանորդ Հայր Սուրբին Սերպիա Այցելութիւնը», Փարոս, 16.06.1936, նաեւ՝ «Պուլկարիոյ Առաջն. Փոխանորդին Այցը ի Եուկոսլաւիա», Պայքարեան Մամուլ, 19.06.1936, նաեւ՝ «Հայերը Եուկո-Սլաւիայի մէջ», Հայրենիք, 11.07.1936։
[107] «Հայերը Եուկոսլաւիոյ մէջ», Հայաստանի Կոչնակ, 4.05.1940, էջ 429։
[108] 1941ի տուեալով՝ Հարաւսլաւիայի հայերը զոհ չեն տուել եւ նրանց նիւթական վնասները եղել են աննշան («Սերպիոյ Հայերը Զոհ Տուած չեն», Հայաստանի Կոչնակ, 19.07.1941, էջ 715)։
[109] Յատկապէս յիշարժան են պարտիզանուհիներ Սիրվարդ Վարդապետեանի եւ Վարդուհի Սուքիասեանի անունները, երկուսն էլ ծնուած Բելգրադում։ Մադումով քեմախցի Սիրվարդ Վարդապետեանը (1924-1944) չորս անգամ ձեռնառումբեր է նետել գերմանական կայանների վրայ, հինգերորդ անգամ, սակայն, բռնուել է եւ նացիստների կողմից հրապարակայնօրէն կացնահարուել Մլադընովաց քաղաքի հրապարակում, ռազմագերիների ներկայութեամբ։ 1967ի Հոկտեմբերի 22ին նրա նահատակման վայրում կանգնեցուել է նրա յուշարձանը (Գէորգ Տարօնի, «Հանդիսաւոր Զօրավար Վլադիսլաւ Ռադովիչի Ղեկավարութեամբ Բացում՝ Հայ Փարթիզանուհի Սիրվարդ

Վարդապետեանի Թուշարձանին», Ջահակիր, 28.11.1974)։ Նրա եղբայրը՝ Միհրդատ Վարդապետեանը, յետագայում Հարաւսլաւիայում յայտնի է դարձել որպէս երգահան։ Վարդուհի Սուքիասեանի (1923-1968) ծածկանունը եղել է Ռուժիցա։ Բ. Աշխարհամարտի ժամանակ թողել է ուսումը Բելգրադի Առեւտրի Ակադեմիայում եւ մտել պարտիզանական ջոկատ։ Որոշ ժամանակ ղեկավարել է Բելգրադի ընդյատակեայ պայքարը, աչքի ընկել սխրագործութիւններով։ Ընկնելով Գեստապոյի ձեռքը՝ Ռուժիցան դատապարտուել է մահապատժի, սակայն ընկերները նրան ազատել են։ Պարգեւատրուել է շքանշաններով։ Հարաւսլաւական դիմադրութեան շարժմանը մասնակցել են նաեւ նրա քոյրերը՝ Թագուհի եւ Մարգարիտ Սուքիասեանները։

110 Թակոր-Գրիգոր, Երկերու Հաւաքածոյ, էջ 101։

111 Արծուի Բախչինեան, Հայազգի Գործիչներ. Հնագոյն ժամանակներից մինչեւ մեր Օրերը, Երեւան, «Զանգակ-97», 2002, էջ 125-126։

112 Totomianz, *Le Rôle*, էջ 3։

113 Hagop-Krikor, էջ 107։ Այստեղ Թակոր-Գրիգորը Պաշիչի անունը սխալմամբ գրել է Ստեփան։

114 Հայաստանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարան, Վահան Մալէգեանի Ֆոնդ, թիւ 722։

115 Զ. Սուրէնեան, «Իմ Սերունդս (Խնդրանք մը Պ. Թակոր-Գրիգորէ)», Արամազդ, 24.04.1936։

116 «Հայուհի մը Դքսուհի», Հայրենիք, 11.04.1933։

117 Թառաջ, 12.01.1927։

118 Թակոր-Գրիգոր, «Հայ Պաշտօնեայ մը՝ Եուկոսլաւ Բանակի մէջ», Հայաստանի Կոչնակ, 2.02.1935, էջ 110-111։

119 «Սերմեր Օտար Հողի վրայ», Հայրենիք, 25.05.1934։ Դաւիդովիչը եղել է տիպիկ ուծացած հայ։ Ինչպէս վկայել է Տոտոմեանցը, «Ասկէ տարի մը առաջ.... Եուկոսլաւիա այցելութեանս առթիւ, Պելկրատի մէջ հանդիպեցայ իմ բարեկամ հայազգի պ. Դաւիթովիչի, որ Եուկոսլաւիոյ արհեստաւորներու բօսիերաթիւներու միութեան քարտուղարն է եւ սերպ տնտեսական թերթի մը խմբագիրը։ Պ. Դաւիթովիչ ինձ յայտնեց, որ դեռ Ժընեւ ուսանող եղած ատեն, «Լառուս» բառարանին մէջ կարդացեր է հայերու մասին «խորամանկ, ժլատ, փերեզակ» որակումները, ամչցած է իր հայ ըլլալու համար եւ նախընտրած է սերպ դառնալ» («Տեսակցութիւն Փրոֆ. Վ. Տոտոմեանցի հետ», Հայրենիք, 25.11.1936)։

120 «Ոսկեայ Պատուանշան Փրոֆ. Տոտոմեանցի», Թուաբեր, 14.01.1935։

121 «Փրոֆ. Տոտոմեանց կը Հաստատուի Պելկրատ», Հայրենիք, 2.11.1937։

122 *Russkoe Zarubeje: Zolotaya Kniga Russkoy Emigratsii. Pervaya Tret' XX Veka. Entsiklopedicheskiy Biograficheskiy Slovar'* (Ռուսական արտերկիր. տարագրութեան ոսկէ գիրքը. Ի. դարի առաջին եռամսեակ, հանրագիտակ կենսագրական բառարան), Մոսկուա, ՌՕՍՍՊԷՆ, 1997, էջ 668։

123 Նոյն, էջ 280, նաեւ՝ Գէորգ Եղիազարեան, «Ռոլանդ Մակարեան, Երգարուեստի Պայծառ Նուիրեալը», Արուեստ, 1991, թ. 7, էջ 47։

124 Թակոր-Գրիգոր, Երկերու Հաւաքածոյ, էջ 28։

125 Ե. Գ., «Հայ Ուսանողի մը Թաջողութիւնը Զաղրէպի մէջ», Թառաջ, 31.03.1931։

126 Թակոր-Գրիգոր, Երկերու Հաւաքածոյ, էջ 102։

127 «Մարաջախտ Թիթօ Ընդունեց Տիգրան պէյ Զրաճեանը», Պայքար, 5.06.1955։

[128] Բրուտեան, էջ 70-73։

[129] Արտակ Մաղալեան, «Մոռացուած էջեր (Սողոմոն Թեհլերեանի կեանքից)», Դրօշակ, 2004, թ. 4, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, էջ 75-79։

[130] Սգակիր մը, «Մերանի Խօրասանճեան, Մնեալ ժանիէթովիչ (Սերպուհի)», Մարմարա, 11.01.1925։ Ի դէպ, նման մի գործչուհի էլ եղել է ԱՄՆում՝ ազգութեամբ հարվաթուհի Իրմա Պոյաճեանը (1902-1986), հանրային գործիչ Վահան Պոյաճեանի կինը, որ մօտիկից կապուած է եղել ամերիկահայ կազմակերպութիւններին, իմացել հայերէն գրել եւ կարդալ։

[131] «Սերպ Գրականութիւն. Կեանքին Ընդմէջէն, Պօր. Միրքօվիչ», Ազատամարտ Գրական Յաւելուած, 20.03.-2.04.1911, էջ 571։

[132] Յովհաննէս Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու 10 Հատորով, Հտոր. 4, Երեւան, Հայաստանի ԳԱ Հրատարակչութիւն, 1991, էջ 611։

[133] Նոյն, էջ 612։

[134] Յովհաննէս Թումանեան, Երկերի ժողովածու 4 Հատորով, Հտոր. 4, Երեւան, Հայաստանի ԳԱ Հրատարակչութիւն, 1969, էջ 272-275։

[135] Աւետիք Իսահակեան, Երկերի ժողովածու, Հտոր. 2, Երեւան, «Հայաստան», 1974, էջ 221-224։

[136] Ռուբէն Սեւակ, Անտիպ էջեր, Երեւան, 1995, «Նաիրի», էջ 28-29։

[137] Բեթար Քոչիչ, «Եապլան (պատմուածք)», Նաւասարդ, 1924, Ա. հատոր, էջ 249-250։ Իւան Քրասքօ, «Vesper Dominicae, Եահվէ (պատմուածքներ)», Նոյն, էջ 250-251։ «Սերպ ժողովրդական Երգեր. Մ՚վ Դրաւ Խնձորը Մոցիս մէջ, Աղջիկները Ի՞նչ Կ՚երագեն», Յառաջ, 4.03.1928, եւն.։

[138] Յակոբ-Գրիգոր, «Սերը Ազգային Դիւցազներգութիւն», Արեւ, 12.12.1938, նաեւ՝ Յակոբ-Գրիգոր, Երկերու Հաւաքածոյ, էջ 306-315։

[139] Յակոբ-Գրիգոր, «Ուրիշ Եուգոսլաւ Հրապարակագիր»։

[140] Յակոբ-Գրիգոր, «Հայութիւնը Ճանչցնելու Համար. Մուսա-Դաղը ու Պեգոր», Պայքար, 25.01.1936։

[141] Յակոբ-Գրիգոր, «Մուսա-Դաղ»ի Յաղթանակը»։

[142] Յակոբ Մանուկեան, Քեմանչիստ Ռուբէնի Յուշերը, «Հայ Տիպ Քոմփիւկրաֆ-Թեքնոփրէս», Պէյրութ, 1989, էջ 44-45։

[143] Սուրէն, «Սերպահայ Կեանքէն», նաեւ՝ «Հայ Երգը Պելկրատի մէջ», Նաւասարդ, 1925, Բ. տարի, Բ. պրակ, էջ 64։

[144] «Հայկական Երեկոյթ մը Սերպիոյ մէջ», Հայրենիք, 21.05.1925։

[145] Վանէ Սանիա, «Հայերը Սերպիոյ մէջ. Պ. Եղիազարեանի Նուագահանդէսը», Մարմարա, 26.02.1925։

[146] Յակոբ-Գրիգոր, «Կոմիտաս Վրդ. Եուգոսլաւիոյ մէջ (Յարութիւն Սիւրմէեանի Երգահանդէսը)», Ապագայ, 15.02.1936։

[147] «Արթիւր Սիւրմէեան Եուկոսլաւ Օփերայի Առաջնակարգ Երգիչ», Հայաստանի Կոչնակ, 24.07.1954, էջ 714, նաեւ՝ Սիմոնեան, «Սողոմոն Թեհլիրեանի», էջ 20։ Ի դէպ, Յարութիւն Սիւրմէեանի որդին՝ Ղազարոս Սիւրմէեանը, եղել է կանադական բալէտի ճանաչուած բնութագրական պարողներից։

[148] Հարաւսլաւիայի հայ երգահանների մասին տե՛ս՝ Բրուտեանի հատորում, էջ 70-73։

[149] Վահրամ Փափազեան, Երկեր Հինգ Հատորով, Հտոր. 1, Երեւան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1979, էջ 306։

[150] Վահրամ Փափազեան, Երկեր Հինգ Հատորով, Հտոր 2, Երեւան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1981, էջ 461։

[151] Յակոբ-Գրիգոր, «Հայութիւնը Ճանչցնելու համար»։

[152] Որպէս ապացոյց յիշենք 1956ի մի վկայութիւն սփիւռքահայ մամուլից։ Յիշուել է, որ Հարաւսլաւիայի Վունց քաղաքում ապրում է 7-8 հայ ընտանիք, որոնք նախապէս եղել են երկրագործներ, իսկ ներկայումս խանութների գործակատարներ եւ արհեստաւորներ են։ «Այս փոքր գաղութը հեզտհետ կ'այլասերի, օտարներու հետ ամուսնութեամբ։ Գաղութի հին անդամները ցաւով դիտել կու տան, թէ ցարդ ոչ մէկ հոգեւոր հովիւ այցելած է իրենց» («Հայ Ազգային Կեանք», Հայաստանի Կոչնակ, 28.04.1956, էջ 405)։

FROM THE HISTORY OF ARMENIAN-YUGOSLAV RELATIONS
(From the beginning to the 1930s)
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN

The article is a compilation of data and information about the few circumstantial contacts and links the Armenians had with the countries and peoples of ex-Yugoslavia throughout the centuries.

The Armenian presence in the territory of ex-Yugoslavia dates back to the 10th century, when Armenian followers of the Paulician movement settled in the area. The oldest Armenian inscriptions in the area date back to 1202 and 1218, both inscribed on Serb churches. In 1392 the Armenian church of Jermenchich was built in Serbia, while various Armenian merchants and craftsmen had settled in the diverse cities of Yugoslavia during the Ottoman rule, especially in Beograd, which has been mentioned in several Armenian manuscripts and literature. An Armenian church and school were established in Novi Sad in 1746. They functioned until the late-1930s and were destroyed in 1964 by the Communist regime.

There were some cultural relations too. Both the first Serbo-Croatian dictionary and the Serbian ABC book were published in the printing house of the Armenian Mekhitarist congregation in Vienna.

After the Armenian Genocide of 1915-1922 many Armenians took refuge in various cities of Yugoslavia. In 1932 the Armenian Union of Beograd was founded. In 1935 there were about 500 Armenians in Yugoslavia, mainly in Beograd and Skopje. These were mostly traders, craftsmen, and physicians; some were intellectuals and artists. Their tiny number and lack of organization led to their assimilation in the Yugoslav community in the 1930s. Nonetheless most of the heirs of the assimilated Armenians try to maintain their national identity.